ՄԱՐԿ ՏՎԵՆ

# ՆԱՎԱՊԵՏ ՍՏՈՐՄՖԻԼԴԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՅԵՐԿԻՆՔ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1936

82 Տ
Տ-90

28 JUN 2005
26 NOV 2011

825
5-30

ՄԱՐԿ ՏՎԵՆ

# ՆԱՎԱՊԵՏ ՍՏՈՐՄՖԻԼԴԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՅԵՐԿԻՆՔ

1009
39783
4017

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Երևան—1936

ԱԵՍ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Պետ. Հանրային
ՀՍԽՀ-ՍՍՀ
Մ. Մասիսյան

Խմբագիր Հ. Պետրոսյան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանցյան
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
* *
*
Պետհրատի տպարան II Գնունի 4
Գլավլիտի լիազոր Կ—1070,
[illegible] Պատվեր [illegible]
Հրատ. 3636, Տ.տաժ 4000
* *
*

# ՄԱՐԿ ՏՎԵՆ

Մարկ Տվենը (նրա իսկական անունը Սամուել Կլեմենս եր) (1835—1910) — ականավոր ամերիկական գրող, հռչակվեց իր սրամիտ պատմվածքներով, վորոնց մեջ նա ծաղրում եր բուրժուական աշխարհի ներկերեսանիությունը, բթությունը արատները։ Նա ծնվել է առևտրականի բավական ունևոր ընտանիքում, բայց վաղ հասակում կորցրեց հորը և տասներկու տարեկան հասակից սկսեց ինքնուրույն աշխատավորական կյանք։ 12—ից մինչև 15 տարեկան դառնալը նա ծառայեց գավառական լրագրի խմբագրատանն իբրև ցրիչ, իսկ հետո իբրև գրաշար։ Փորձեց բազմաթիվ արհեստներ, ապա սկսեց աշխատակցել լրագրերին և միանգամից աչքի ընկավ իր վառ ու կենդանի պատմվածքներով, վորոնց մեջ շատ հաջող կերպով ծաղրում եր իրեն շրջապատող կյանքի ծիծաղելի և այլանդակ կողմերը։ Վորպես մանր բուրժուական գրող նա չեր կարող առանձնապես խորը մերկացնել կապիտալիստական աշխարհի թերությունները, բայց և այնպես նրա ծաղրը փայլուն եր, սուր, իսկ յերբեմն և սպանիչ բուրժուական յերեսպաշտների համար։ «Նավապետ Ստորմֆիլդի ճանապարհորդությունը դեպի յերկինք» ուրվագրի եյությունն ամենևին ել հանդերձյալ յերկնային կյանքը չե։ Այդ մտացածին նյութը Մարկ Տվենը վերցնում է միայն նրա համար, վորպեսզի մի անգամ ել սուր կերպով ծաղրի բուրժուական նիստ ու կացը, իր՝ հարստության և իշխանության առաջ ծունը դնելու և իսկական աշխատանքը

հնչելու ընդունակությամբ, դեպի տաղանդներն ունեցած ուշադրությամբ ու կուրությամբ, գործադուրկների և աղքատների ստորացմամբ, իսկ վոր գլխավորն է, իր յեկեղեցական քարոզիչներով, վորոնք, պաշտպանելով ամերիկական դաժան իրականությունը, տալիս են դժբախտներին հանդերձյալ կյանքի քաղցրամեղց, կեղծ, բութ և անքանքար փառաբանությունը։

Վորպեսզի «յերկնային արքայության» մասին տերտերների հորինած բարբաջանքները պատկերացնի ծիծաղելի ձևով, Մարկ Տվենը չի վախենում կոպիտ ու վառ գույներից։ Այդ պատմվածքի շատ տեղերում ընթերցողը կզգա արվեստագետի մեծ ուժը, վորի ծաղրանքը հաջող կերպով խարազանում է յերկերեսանի մարդկանց։

Յերևակայական յերկնային կյանքը Տվենը մասամբ տալիս է վորպես ապագա սոցիալական իրավակարգի մի ակնարկ, վորտեղ կենցաղային անարդարությունները կգտնեն իրենց լուծումը։ Այստեղ Տվենը մակերեսային է և միամիտ։ Բայց խորհրդավոր ընթերցողն ինքը կտեսնի, վոր այն ամենը, վորի մասին Տվենը յերազել անգամ չեր կարող՝ սլանալով յերևակայական յերկինքը, իրականացել և իրականանում է այժմ, յերկրի այն կիսագնդում, վորը գտնվում է Ամերիկայի հակառակ կողմը։

---



1

Յեվ ահա յերեսուն տարի մեռած մնալուց հետո յես սկսեցի մի փոքր անհանգստանալ։

Յերևակայիր, յես այդ ամբողջ ժամանակ սլանում եյի տարածության մեջ ինչպես գիսավոր աստղ։ Վորպես գիսավոր աստղ։ Չե, չե, Պիտերս, յես նրանցից շատերին իմ հետևը թողի։ Պարզ է, վոր գիսավոր աստղերից վոչ մեկը չեր կարող լինել, հասկանում ես, իմ մշտական ուղեկիցը, վորովհետև նրանք ճանապարհորդում են յերկարավուն շրջագծով, վոր նման է ողապարանի ողին, իսկ յես բաց եյի թողնված ինչպես նետելու մի տեգ ուղիղ դեպի ապագա կյանքը։ Բայց յերբեմն պատահում եր, վոր գիսավոր աստղերից վորևե մեկը մի ժամով, կամ մոտավորապես այդքան, ճանապարհին ինձ հետ եր յինում, և այդ ժամանակ մենք մի փոքր զբաղվում եյինք իրար։ Ասենք այդ բանը սովորաբար կատարվում եր բավական միակողմանի, վորովհետև յես նրանց մոտով լողում եյի այնպես, կարծես նրանք հանգիստ կանգնած եյին իրենց տեղում։ Սովորական

գիսաստղը թռչում է վոչ ավելի քան յերկու հարյուր հազար մղոն [1]) ամի ընթացքում։ Յեվ, պարզ է ի հարկե, յերբ յես առաջ անցա մի ինչ — վոր գիսաստղից, —վորնման եր, որինակ, Ենկե՛յի և Հալլեյի գիսաստղերին,—այդ տեսեց, հասկանում ես, հազիվ մի ակնթարթ—փայլեց ու անհետացավ։ Դու այդ բանը չեյիր անվանի նույնիսկ արագության մրցություն։ Գիսաստղը նմանում եր ապրանքատար գնացքի, իսկ յես՝ հեռագրի դեպեշի։ Բայց յերբ յես դուրս թռա մեր համակարգության սահմաններից, յես յերբեմն հասնում եյի վորևե գիսաստղի, վորը մի քիչ նման եր ինձ իր արագությամբ։ Սեզ մոտ այդպիսի գիսաստղեր չկան—մերոնք յետ են մնում։ Մի գիշեր յես լողում եյի ազատ, շատ լավ կարգի գցած ու լրիվ սարքավորումով, և քամին համընթաց եր ինձ— կարծում եմ, վոր յես կտրում եյի մոտ մեկ միլիոն մղոն մի ընթացքում, գուցե և ավելի, բայց վոչ պակաս—յերբ յես նկատեցի իմ աջ կողմից մի հսկա գիսաստղ։ Նրա պոչում յերևացող կրակներից յես գլխի ընկա, վոր նա սլանում է մոտավոր ճշտությամբ դեպի հյուսիս—արևելք։ Դե այդ այնքան մոտիկ եր իմ ուղղությանը, վոր յես վորոշեցի ոգտվել հանգամանքից։ Յես թեքվեցի մի փոքր աջ, ուղղեցի ղեկը ու գնացի դեպի նա։ Յեթե դու լսեյիր, թե ինչպես եյի յես շրվշրվացնում, և յեթե տեսնեյիր այդ ելեկտրական թրուիչքը։

[1]) Ծովային մղոնը հավասար է մոտավորապես յերկու կիլոմետրի։



Մեկ և կես ընդամենը չանցած՝ յես հասա ելեկտրական փայլին, վորը տարածվում եր անհամար մղոններ և լուսավորում եր ամբողջ տարածությունը՝ ինչպես որը կեսորին։ Գիսաստղը, յերբ յես առաջին անգամ տեսա, հեռվից փայլփլում եր կապույտ առկայծումով, վորպես հանգչող ջահ, բայց նա ավելի ու ավելի յեր մեծանում, քան՝ յես մոտենում եյի նրան։ Յես սլանում եյի այնպիսի արագությամբ, վոր յերբ կտրեցի անցա մինչև հարյուր հիսուն միլիոն մղոն, քիչ մնաց կուլ գընայի նրա պոչի շլացուցիչ լույսի մեջ, և վոչինչ չեյի կարողանում նշմարել այդ փայլից։ Կամ, մոտածում եմ, չպետք է մտնել նրա ներսը։ Յես մանյակը արի դեպի կողք և նետվեցի առաջ։ Շուտով յես հավասարվեցի նրա պոչին։ Գիտե՞ս՝ այդ ինչի յեր նման։ Այդ միևնույն եր, թե մլակը մոտեցավ ամերիկական մայր-ցամաքին։ Ամբողջ ուժով սլանում եյի յես գիսաստղի մոտով։ Կամաց-կամաց յես լողացի նրա կողքովը՝ մի փոքր ավելի քան հարյուր հիսուն միլիոն մղոն, և այդտեղ նրա ձևից իմացա, վոր դեռ նույնիսկ նրա գոտուն չեմ հասել։ Բաս, Պիտերս, այստեղ մենք վոչինչ չգիտենք գիսաստղերի մասին։ Յեթե դու ուզում ես տեսնել, թե ինչ ձևի յեն լինում իսկական գիսաստղերը, դու պիտի դուրս թռչես մեր արևի սիստեմից—այնտեղ, վորտեղ նրանց համար լայնարձակ է, հասկանում ես։ Յես տեսա այնտեղ, բարեկամս, գիսաստղեր, վորոնք չեյին կարող նույնիսկ տեղավորվել մեր ամենանշանա-

գիսաստղը թռչում է վոչ ավելի քան յերկու հարյուր հազար մղոն [1]) ժի բոպեյում։ Յեվ, պարզ է ի հարկե, յերբ յես առաջ անցա մի ինչ — վոր գիսաստղից, —վորնման ես, որինակ, Ենկե՛յի և Հալլեյի գիսաստղերին,—այդ տեղ, հասկանում ես, հազիվ մի ակնթարթ—փայլեց ու անհետացավ։ Դու այդ բանը չեյիր անվանի նույնիսկ արագության մրցություն։ Գիսաստղը նմանում էր ապրանքատար գնացքի, իսկ յես՝ հեռագրի դեպեշի։ Բայց յերբ յես դուրս թռա մեր համակարգության սահմաններից, յես յերբեմն հասնում եյի վորևե գիսաստղի, վորը մի քիչ նման էր ինձ իր արագությամբ։ Մեզ մոտ այդպիսի գիսաստղեր չկան—մերոնք յետ են մնում։ Մի գիշեր յես լողում եյի ազատ, շատ լավ կարգի գցած ու լրիվ սարքավորումով, և քամին համընթաց էր ինձ— կարծում եմ, վոր յես կտրում եյի մոտ մեկ միլիոն մղոն մի բոպեյում, գուցե և ավելի. բայց վոչ պակաս—յերբ յես նկատեցի իմ աջ կողմից մի հսկա գիսաստղ։ Նրա պոչում յերևացող կրակներից յես գլխի ընկա, վոր նա սլանում է մոտավոր ճշտությամբ դեպի հյուսիս—արևելք։ Դե այդ այնքան մոտիկ էր իմ ուղղությանը, վոր յես վորոշեցի ոգտվել հանգամանքից։ Յես թեքվեցի մի փոքր աջ, ուղղեցի ղեկը ու գնացի դեպի նա։ Յեթե դու լսեյիր, թե ինչպես եյի յես շրվշրվացնում, և յեթե տեսնեյիր այդ էլեկտրական թռիչքը։

[1]) Ծովային մղոնը հավասար է. մոտավորապես յերկու կիլոմետրի։



Մեկ և կես բոպե չանցած՝ յես հասա էլեկտրական փայլին, վորը տարածվում էր անհամար մղոններ և լուսավորում էր ամբողջ տարածությունը՝ ինչպես որը կեսորին։ Գիսաստղը, յերբ յես առաջին անգամ տեսա, հեռվից փայլփլում էր կապույտ առկայծումով, վորպես հանգչող ջահ, բայց նա ավելի ու ավելի յեր մեծանում, քան՝ի յես մոտենում եյի նրան։ Յես սլանում եյի այնպիսի արագությամբ, վոր յերբ կտրեցի անցա մինչև հարյուր հիսուն միլիոն մղոն, քիչ մնաց կուլ գընայի նրա պոչի շլացուցիչ լույսի մեջ, և վոչինչ չեյի կարողանում նշմարել այդ փայլից։ Կամ, մոտածում եմ, չպետք է մտնել նրա ներսը։ Յես մանյակը արի դեպի կողք և նետվեցի առաջ։ Շուտով յես հավասարվեցի նրա պոչին։ Գիտե՞ս՝ այդ ինչի յեր նման։ Այդ միևնույն էր, թե մլակը մոտեցավ ամերիկական մայր-ցամաքին։ Ամբողջ ուժով սլանում եյի յես գիսաստղի մոտով։ Կամաց-կամաց յես լողացի նրա կողքով՝ մի փոքր ավելի քան հարյուր հիսուն միլիոն մղոն, և այդտեղ նրա ձևից իմացա, վոր դեռ նույնիսկ նրա գոտուն չեմ հասել։ Բաս, Պիտերս, այստեղ մենք վոչինչ չգիտենք գիսաստղերի մասին։ Յեթե դու ուզում ես տեսնել, թե ինչ ձևի յեն լինում իսկական գիսաստղերը, դու պիտի դուրս թռչես մեր արևի սիստեմից—այնտեղ, վորտեղ նրանց համար լայնարձակ է, հասկանում ես։ Յես տեսա այնտեղ, բարեկամս, գիսաստղեր, վորոնք չեյին կարող նույնիսկ տեղավորվել մեր ամենանշանա-

վոր գիսաստղերի ուղեծիրի [1])մեջ—պոչը դուրս կմնար։

Ուրեմն այդպես, յես անցա ելի հարյուր հիսուն միլիոն մղոն և հավասարվեցի, կասեյիր դու, գիսաստղի թևի հետ։ Ասոտովանում եմ, յես ինձ զգում եյի բավական լավ։ Բայց այդտեղ յես հանկարծ նկատեցի տախտակամածի վրա մի սպայի, վորը մոտեցավ նավեզրին և ուղղեց ինձ վրա իր յերկդիտակը։ Յեվ անմիջապես, լսում եմ, նա բղավեց.

—Ե՛յ, ներքևի մարդիկ։ Շարժվեցեք, շարժվեցեք։ Լցրեք հնոցները հարյուր միլիոն բիլիոն [2]) ծծումբ։

—Յեղա՛վ, յեղավ, սըր[3])։

—Շվացրեք վախտը[4])։ Բոլորը տախտակամածի վրա։

—Յեղավ, յեղավ, սըր։

—Ուղարկեցեք յերկու հարյուր հազար միլիոն մարդ վերև բոմբրամսելներն ու տրյումսելները[5]) բարձրացնելու համար։

—Յեղավ, յեղավ, սը՛ր։

—Դիր լիսելները[6])։ Բարձրացրեք բոլոր առագաստները մինչև վերջին լաթի կտորը։ Սարքը լրացրեք նավի ծայրից մինչև նավախելը[7])։

[1]) Ուղեծիր (յեվր. որբիտ)—յերկնային մարմնի շրջանաձև ուղին տարածության մեջ։

[2]) Բիլիոն—հազար միլիոն, միլիարդ։

[3]) Սըր—անգլերեն պարոն։

[4]) Վախտ—նավի անձնակազմի հերթափոխությունը։

[5]) Բոմբրամսելներ, տրյումսելներ—տարբեր ձևի առագաստներ։

[6]) Լիսելներ— նույնպես առագաստներ։

[7]) Նավախել —նավի յետևի մասը։



—Յեղավ, սը՛ր։

Այստեղ յես հասկացա, Պիտերս, վոր գործ ունեմ բավական լուրջ ախոյանի հետ։ Մի տասվայրկյանից հետո գիսաստղի վրա վոլորապտույտ բարձրացավ շիկակարմիր առագաստների շողշողուն ամպը։ Նրանք ծառանում եյին դեպի յերկինք, տեսողության սահմաններից դուրս գալով —թվում եր, թե ամբողջ տարածությունը լցվեց նրանցով։ Կորշ ծուխը դուրս եր նետվում հնոցներից—ո՛, վոչվոք չեր կարող նկարագրել, թե ինչպես եր նա քուլա-քուլա կուտակվում դեպի յերկինք, և վոչվոք չեր կարող նկարագրել այդ հոտը։ Յեվ վոչվոք ոիսկ չեր անի խոսքերով արտահայտելու, թե ինչպես դղրդաց այդ հրեշավոր նավը։ Յեվ դրա հետ միասին հազարավոր սուլոցներ ծղրտացին մի անգամից, և անձնակազմը, վոր հավասար ե հարյուր հազար աշխարհների բնակչությանը, սկսեց նզովքներ տեղալ։ Դե՛ յես յերբեք չեյի լսել այսպիսի մի բան։ Մենք յերկուսով մոնչում եյինք ու վորոտում կողք-կողքի, գործադրելով մեր ամբողջ ուժը, վորովհետև յես դեռ չեյի հանդիպել մի այնպիսի գիսաստղի, վորը կարողանար ինձ յետ թողնել, և ինձ պարտավոր եյի համարում դրան ել հաղթելու։ Յես յենթադրում եյի, վոր արդեն բավական հռչակ ունեյի տիեզերական տարածության մեջ, և յես հուսս ունեյի վոր իմ անունը չեմ կորցրի։ Յես նկատում եյի, վոր այժմ գիսաստղից այնքան ել առաջ չեյի ընկնում, բայց և այնպես նրանից առաջ ընկա։

Հսկայական հուզմունք բարձրացավ գիսաստղի տախտակամածների վրա։ Հարյուր բիլիոն ուղևորներ դուրս թափվեցին ներքևից վերև, հավաքվեցին նավեզրի մոտ և գրազ եյին գալիս, թե ով ուժից կանցնի։ Իսկապես նրանք թեքեցին գիսաստղը մի կողքի վրա և դանդաղեցրին նրա վազքը։ Բայց դե նավապետի ոգնականը հիմար չեր։ Նա մոտ վազեց այդ ամբոխին՝ ռուպորը բռնած, և վորոտաց.

—Դեպի կենտրոն, դեպի կենտրոն, ես, դուք...

—Այդտեղ նավապետ Ստորմֆիլդը չեր կարողանում հիշել մի բառ.—կամ թե չե՝ ձեր բոլորի ուղեղները ցրիվ կտամ մինչև վերջին ապուշները։

Բայց դե, Պիտերս, յես պարզապես անցնում եյի արդեն, և վերջապես սողացի այդ հոյակապ բոցավառ գիսաստղի քթի մոտով։ Այդ միջոցին արթնացրին գիսաստղի նավապետին, և նա կանգնած եր՝ շրջապատված կարմիր փայլով, հագին շապիկ և հողաթափներ, մազերը ցրիվ յեկած, վարտքակալի մի կոպն ելկախ ընկած։ Նավապետն ու ոգնականը կանգնած եյին իրար մոտ, և ինչպիսի փքված տեսք ունեյին նրանք։ Յես ուղղակի չհամբերեցի, դրի մեծ մատս քթիս, յերբ անցնում եյի նրանցից, և բղավեցի.

—Պա—պա—պա, չեք ուզի արդյոք ձեր հարազատներին մի լուր ուղարկել։

Պիտերս, սխալ եր այդ։ Այո, յես հետո շատ ափսոսացի դրա համար, սխալ եր այդ։ Գիտեմ ինչ, նավապետն արդեն ուզում եր ձեռք քաշել այդ մրցությունից, բայց իմ նկատողությունը զայրացրեց նրան։ Նա դարձավ դեպի ոգնականն ու ասաց.

—Մենք բավականաչափ սեփական ծծումբ ունենք այդ նավորդության համար։

—Այո, սր։

—Հաստատ։

—Այո, սր, ավելի քան հերիք է։

—Ի՞նչ բեռ ունենք մենք սատանայի համար։

—Հազար ութ հարյուր հազար բիլիոն կիլոտիլիոն կազարկ։

—Լավ, թող այդ դեպքում նրա կենդանները մի քիչ ել ցուրտ քաշեն, մինչև մյուս գիսաստղի գալը։

Պիտերս, նայիր իմ աչքերին և մի հուզվիր։ Յես հետո իմացա, վոր կազարկը ճիշտ վոր ճիշտ հարյուր վաթսունինն մեր յեկրի նման աշխարհների ծանրություն ուներ։ Յեվ նրանք շուտ տվին այդ ամբողջ բեռը նավեզրից դուրս։ Յերբ նա վայր ընկավ, մաքուր ավլեց աստղերի մի ամբողջ համախումբ, կարծես մոմեր եյին վառվում, և մեկը հանկարծ հանգցրեց բոլորը։ Իսկ մեր մրցավազքը հանկարծ վերջացավ հենց նույն բոպեյին, յերբ նա թեթևացավ, գիսաստղն այնպիսի արագությամբ նետվեց առաջ, կարծես յես խարսխվեցի իմ տեղում։ Նավապետն անցավ դեպի նավախելը։ Նա դրեց մեծ մատը քթին ու գոռաց.

—Պա—պա—պա—պա, չեք ուզի արդյոք ձեր հարազատներին մի լուր ուղարկել։

Հետո նա ամրացրեց իր վարտքակալը և ուղե-

վորվեց դեպի նավի առաջի մասը, իսկ յերեք քառորդ ժամ հետո նրա նավը նորից առկայծում եր հանգչող ջահի նման հեռվում։ Այո, սխալ բան եր այդ, Պիտերս,— յես չպետք է ծաղրեյի նրան։ Միշտ ել կափսոսամ այդ։ Յես այդ յերկնային անբարիշաի հախից կգայի, յեթե լեզուս կարճ պահեյի։

Բայց յես մի փոքր շեղվեցի իմ պատմության գլխավոր ուղղությունից։ Վերադառնանք նորից այդ նյութին։ Դու հասկացար՝ ինչ արագությամբ եյի սլանում։ Իսկ յերբ, ինչպես յես ասացի, լրացավ այդ արտասովոր ճանապարհորդության մոտ յերեսուն տարին, յես սկսեցի անհանգստանալ։ Ո՞, այդ բավական դուրեկան եր, և իհարկե հետաքրքիր, բայց մի տեսակ, գիտես, ամայություն եր, և ցանկություն ծագեց իմ մեջ հասնել մի վորևե տեղ։ Յես ճանապարհ ընկա վոչ այն մտադրությամբ, վոր պիտի հավիտյան թռչեմ։ Ուզում եյի կանգ առնել նաև այն պատճառով, վոր սիրտս սկսել եր խառնել միքանի տաք տեղերում, վորտեղով յես թռչում եյի, և վերջիվերջո յես զգում եյի, վոր ավելի լավ է մի տեղ, ուր ուզում է լինի, կանգ առնել, միայն թե վերջանար այդ անորոշ դրությունը։

Այդպես ուրեմն։ Մի անգամ գիշերը... այնտեղ միշտ գիշեր է, միայն յերբ յես սլանում եյի մի վորևե աստղի մոտով, վորը վողողում եր տիեզերքը կրակով և փայլով, դե այդ ժամանակ իհարկե բավական լույս է լինում, բայց յես մեկ կամ յերկու բոպե հետո աստղը թողնում եյի յետևս և նորից մի ամբողջ շաբաթ ընկղմվում եյի խավարի մեջ։ Աստղերն այնքան ել մոտիկ չեյին իրար, ինչքան մեզ թվում է յերկրի վրայից... Հա՛, վորտեղ կանգ առա։ Այո, մի անգամ գիշերը հանկարծ յես նկատեցի հեռվում հորիզոնի վրա առկայծող կրակների մի հսկայական շարք։ Քանի յես մոտենում եյի, նրանք մեծանում, ուռչում եյին և սկսեցին նմանել զորեղ հնոցների։ Յես ասացի ինքս ինձ.

—Սատանան տանի, վերջապես տեղ հասա։ — Յեվ վատ տեղ հասա։ Յես հենց այդ բանից եյի վախենում։

Այդտեղ յես ուշքս կորցրի։ Յերկար մնացի յես այդպես, թե քիչ—չգիտեմ. յերևի բավական յերկար մնացի, վորովհետև, յերբ ուշքս յեկավ գլուխս, խավարն անհայտացել եր, մի շատ դուրեկան արևոտ որ եր և մեղմորեն շարժվում եր հրաշալի, բուրավետ ոդը։ Յեվ սքանչելի մի աշխարհ բացվեց իմ առջև—պայծառ, չքնաղ, համայիչ յերկիր։ Այն բաները վոր յես հնոցների տեղ եյի դրել, դարպասներ եյին, վորոնք բազմաթիվ մղոն բարձրություն ունեյին և կառուցված եյին ամբողջովին փայլուն թանկագին քարերից, իսկ պատերը, վորոնց մեջ նրանք շինված եյին, այնպիսի ամբողջական վոսկուց եյին, վոր դու վոչ նրանց կատարը կտեսնեյիր, վոչ ել ծայրերը յերկու կողմի վրա։ Յես ուղղված եյի ուղիղ դեպի այդ դարպասներից մեկը, վոր նման եր վառվող տան մուտքի։ Այդտեղ յես նկատեցի, վոր յերկինքը սևացել եր մի միլիոն մարդկանցից, վորոնք գնում եյին դեպի նույն այդ դար-

պասը։ Իրենց պիսի թնդյուն եյին բարձրացրել նը-
բանք, սլանալով ոդի միջով։ Գետնի վրա ել մար-
դիկ եյին վխտում, ինչպես մրջյունները—այսպես,
բիլիոններ կլիներ, կարծում եմ։

Յես իջա։ Լ.ղ տվի դեպի դարպասը՝ վխտա-
ցող ամբոխի հետ միասին, և յերբ յեկավ իմ
հերթը, ավագ գրագիրն ասաց բանիմաց ձևով.

—Դե, շուտ։ Դուք վՀրտեղացի յեք։

—Սան-Ֆրանցիսկոյից,—ասացի յես։

—Սան-Ֆրան... վՀնց։

—Սան-Ֆրանցիսկոյից։[1])

Նա գլուխը քորեց ու կարծես ընկավ տարա-
կուսանքի մեջ։

—ՄոլորաՀակ ե այդ։

Սատանան տանի, Պիտերս, յերևակայիր մեկ։

—ՄոլորաՀակ,—բացականչեցի յես.—քաղաք ե,
հսկա, գեղեցիկ և...

—Լավ, լավ,—ընդհատեց նա։ Այստեղ մենք
ժամանակ չունենք զրույցով զբաղվելու։ Մենք
այստեղ քաղաքներով չենք զբաղվում։ Ընդհանուր
առմամբ՝ դուք վՀրտեղացի յեք։

—Ա՜,—ասացի յես,—ներեցեք։ Գրեցեք ինձ
Կալիֆորնիացի։

Նորից յես նրան տարակուսանքի մեջ գցեցի,
Պիտերս. նա շփոթվեց մի վայրկյան, հետո բղավեց
կոպիտ և չարացած.

—Այդպիսի մոլորակ յես չգիտեմ։ Կամ գուցե
այդ համաստեղություն ե։

[1]) Սան-Ֆրանցիսկո— ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի
գլխավոր քաղաքը։



—Ա՛յ քեզ հրաշք, վրա բերի յես,—համաստե-
ղություն, ասացիք։ Չե՜, նահանգ ե այդ։

Ա՛յ մարդ, մենք այստեղ նահանգներով չենք
զբաղվում։ ԾանկանՀում եք ինձ ասել՝ վՀրտեղա-
ցի յեք դուք ընդհանուր, լայն մտքով, հասկա-
նՀում եք։

—Ա՜, այժմ յես հասկացա ձեր միտքը,—ասացի
յես։—Յես Ամերիկացի յեմ։ Ամերիկայի Միացյալ
Նահանգներից։

Պիտերս, գիտես, յես ելի նրան տարակուսան-
քի մեջ գցեցի։ Նրա դեմքը բութ եր ու սպիտակ,
ինչպես նշանի տախտակը յերկրապահ զինվորների
հրացանաձգությունից հետո։ Նա դարձավ կրտսեր
գրագրին ու ասաց.

—ՎՀրտեղ ե Ամերիկան, ինչ Ամերիկա։

Կրտսեր գրագիրը վեր թռավ տեղից ու պա-
տասխանեց.

—Այդպիսի գունդ չկա։

—Գունդ,—առարկեցի յես։—Ախր ինչ եք ա-
սում, յերիտասարդ։ Վոչ թե գունդ, այլ յերկիր,
մայր ցամաք։ Կոլումբոսն ե գտել։ Դե Կոլումբոսի
մասին հո անպատճառ լսած կլինեք, ինչպես ել
լինի։ Ամերիկան, սը՛ր, Ամերիկան ե...

—Կամաց,—բղավեց ավագ գրագիրը.— ՎՀր-
տեղից եք դուք։

—Դե,—ասացի յես,—չգիտեմ՝ ել ինչպես պա-
տասխանեմ։ Արի հենց մի անգամից ասեմ, վոր
յես յեկել եմ աշխարհից։

—Ա՜յ,—ուրախացավ նա,—ինչ եմ ասել, այդ
մի բանի նման և։ ՎՀր աշխարհից։

Պիտերս, այժմ նա ինձ տարակուսանքի մեջ գցեց։ Ցես նայում եյի նրան խիստ շփոթված, նա նայում եր ինձ անհամբերությամբ։ Հետո պայթեց.

— Դե, դե, վո՞ր աշխարհից։

Ա՛յն աշխարհից, ի հարկե,— ասում եմ յես։

— Ա՛յն աշխարհից,— բղավում է նա,— հը՞մ, բիլիոնավոր աշխարհներ կան... Հետևյալը։

Այդ նշանակում է՝ մի կողմ կանգնիր։ Ցես քաշվեցի մի կողմ, իսկ իմ տեղը ցատկոտելով յեկավ յերկնագույն մի մարդ, յոթ գլխանի և մի վոտանի։ Ցես գնացի ման գալու։ Ցեվ ահա յես տեսնում եմ, վոր այդ բոլոր անթիվ անհամար մարդիկ, վորոնք վխտում եյին այդ դարպասների մոտ, շատ ու շատ նման եյին այն մի վոտանի մարդուն։ Ցես փորձեցի գտնել վորևե ծանոթ մարդու, բայց ծանոթ չկար։ Այդ ժամանակ յես յերկարբարակ խորհեցի իմ դրությանմասին և վերադարձա դարպասների մոտ, խեղճացած և շվարած։

— Հը՞,— հանդիպեց ինձ ավագ գրագիրը։

Ե՛հ, սը՛ր,— ասացի յես բավական համեստությամբ,— ինձ թվում է՝ յես չեմ կարողանա վորոշել, թե յես վո՞ր աշխարհից եմ։ Բայց դուք յերևի գլխի կընկնեք մի կերպ։

— Վո՞ր աստղագիտական սիստեմի մեջ է ձեր աշխարհը։ Գուցե այդ կողմի։

— Նրա մեջ են արևը... և լուսինը... և Մարսը[1])...

[1]) Մարս, Ուրան, Նեպտուն, Յուպիտեր—մոլորակներ, վորոնք պտտվում են արևի շուրջը։



Նա թափահարում եր գլուխն ամեն մի անունը լսելիս։ Ցերբեք չեր լսել դրանց մասին հասկանում ես։

— Ցեվ Նեպտունը... և Ուրանը... և Յուպիտերը...

— Կացեք,— բացականչեց նա,— սպասեցեք մի բոպե։ Յուպիտեր... Յուպիտեր... կարծես մոտ 800 թե 900 տարի առաջ այնտեղացի մի մարդ կար... բայց այդ սիստեմից շատ քիչ մարդիկ են պատահում մեզ մոտ։

Հանկարծ նրա հայացքը մեխվեց իմ վրա այնպես հաստատորեն, կարծես ուզում եր շաղափել ինձ։ Ցեվ հետո հարցրեց լրջորեն.

— Դուք ուղղակի ձեր սիստեմից եք յեկել այստեղ։

— Այո՛, ս՛ը՛ր,— պատասխանեցի յես, բայց մի փոքր կարմրեցի իմ խոսքից։

Նա նայեց ինձ շատ խստորեն և ասաց.

— Այդ ճիշտ չե։ Ցեվ այստեղ կեղծելու տեղը չե։ Դուք շեղվել եք ձեր ճանապարհից։ Ի՞նչպես յեղավ այդ։

Ցես նորից կարմրեցի։

— Ներեցեք։ Ցես յետ եմ վերցնում իմ խոսքերը և խոստովանում եմ ձեզ։ Ցես մի փոքր մրցության մտա այդտեղ մի գիսաստղի հետ... և մի քիչ, բոլորովին քիչ շեղվեցի....

— Այդպես, այդպես,— ասաց նա առանց վորևե փափկության իր ձայնի մեջ։

Ցես շարունակեցի.

— Բայց յես շատ քիչ շեղվեցի իմ ուղղու-





ՀԱՅ ՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ
Ուսումնական
ՀՍՍՀ-ՍՍՌ
Ա. Մասիսյան
Ա. ՍՎԱՍՏԻԿՅԱՆԻ ՄԵՆԱՆ
39783

թյունից և իսկույն ուղղեցի իմ ընթացքը մրցավազքից հետո։

— Մինչև այդ շեղվելուց ել առաջացան այդ բոլոր անախորժությունները։ Դուք շեղվել եք ձեր նպատակներից դեպի դարպասները բիլիոնավոր մղոններով։ Եթե դուք գայիք ձեր դարպասի մոտ, այնտեղ իսկույն գլխի կընկնեյին ձեր աշխարհի մասին և հապաղում չեր լինի։

Նա դարձավ կրտսեր գրագրին.

— Վո՞ր սիստեմումն ե Յուպիտերը։

— Չեմ հիշում, սը՛ր։ Բայց կարծես՝ կա մի այդպիսի մոլորակ նոր և մանր սիստեմներից մեկում, տիեզերքի հեռավոր և սակավաբնակ անկյունում։ Ցես կնայեմ։

Նա վերցրեց մի ոդապարիկ ու թռավ վեր, վեր ու վեր քարտեզի առջևով, վորը Ամերիկայի մի փոքրիկ նահանգի չափ եր։ Նա շուտով արդեն չեր յերևում, հետո կամաց-կամաց սկսեց իջնել, մի քիչ բան կերավ և նորից սողաց վերև։ Կարճ ասած՝ նա մի յերկու որ փնտռում եր, վերջապես իջավ և ասաց, վոր, կարծես՝ գտել ե այդ արեգակի սիստեմը, յեթե միայն ճանճերը չեն կեղտոտել քարտեզը։ Դրա համար ել նա վերցրեց մանրադիտակն ու նորից ճամբա ընկավ։ Գործն ավելի հաջող դուրս յեկավ, քան նա կարծում եր։ Նա գտավ մեր սիստեմը բավական ճշտորեն։ Նա հարկադրեց ինձ նկարագրել մեր մոլորակը, նրա հեռավորությունն արեգակից, և ասաց իր պետին.



— Ո՛, յես գիտեմ հիմա, սը՛ր, ինչի մասին ե նա ասում։ Քարտեզի վրա այդ կա։ Նրա անունն ե Կոծիծ։[1])

Իսկ յես ասում եմ ինձ ու ինձ. «Տղա՛, եժան չեր նստի քեզ, յեթե դու իջնեյիր մեզ մոտ— Յերկրի վրա, և նրան Կոծիծ անունը տայիր»։

Ե՛հ, նրանք թույլ տվին ինձ ներս գնալ, և ասացին, վոր այժմ վոչ մի վտանգ չկա, և այլևս վոչ վոք ինձ անհանգստություն չի պատճառի։

Ապա նրանք ինձ թողին ազատ և զբաղվեցին իրենց գործով։ Յերևի նրանք իմ գործը համարեցին վերջացած և կարգի գցած։ Ցես շատ զարմացա, բայց սիրտ չեյի անում խոսելու և հիշեցնելու իմ մասին։ Դու գիտես, յես չեմ սիրում աներեսություն անել, և անհարմարեր ձանձրացնել նրանց, նրանք սաստիկ զբաղված եյին։ Յերկու անգամ յես վճռեցի և ուզում եյի ավելի համարձակ լինել։ Յեվ յերկու անգամն ել յես քաշվեցի։ Բայց անմիջապես յես պատկերացնում եյի ինձ, թե ինչպիսի տեսք պիտի ունենամ յես փրկվածների մեջ իմ այս լաթ-լութի մեջ, և այդ ստիպում եր ինձ վերադառնալ և նորից խարխսի գցել։

Բոլորը նայում եյին ինձ,—գրագիրները, հասկանում ես, զարմանում եյին, թե ինչու յես չեմ գնում։ Ցես չեյի կարող անվերջ տանել այդ բանը— շատ անհարմար եր։ Այդ պատճառով յես վերջապես հավաքեցի քաջությունս ու գլխով արի գրագրին։ Նա բացականչեց.

---

[1]) Կոծիծ — մաղավոր խալ մարդու յերեսին, յերունդ։

— Ի՞նչ, դուք դեռ այստեղ եք։ Ինչի՞ յեք սպասում։

Յեսս ձեռքերս խողովակաձև դրի բերանիս և գաղտնաբար շշնջացի նրա ականջին.

— Ներեցեք, յես հիշեցնում եմ ձեզ իմ մասին և ձանձրացնում եմ ձեզ։ Բայց չե՞ք մոռացել դուք մի բան։

Նա մտածեց մի վայրկյան և ասաց.

— Բան եմ մոռացե՞լ։ Չե՛, կարծեմ վոչինչ։

— Լավ մտածեցեք։

Նա մտածեց, ապա ասաց։

— Չե՛ կարծես վոչինչ չեմ մոռացել։ Բանն ի՞նչ է։

— Նայեցեք ինձ,— հրավիրեցի յես,— զննեցեք ինձ վոտից գլուխ։

Նա այդպես էլ արեց։

— Հետո՞,— ասաց նա։

— Հետո՞,— կրկնեցի յես,— դուք վոչինչ չնկատեցի՞ք։ Յեթե յես իմ տեսքով տարբերվեմ ընտրյալներից, չե՞մ գրավի արդյոք ինձ վրա ավելորդ ուշադրություն։ Արդյոք մի փոքր աչքի չե՞մ ընկնի։

Ե՛հ,— առարկեց նա,— յես չեմ հասկանում բանն ի՞նչ է։ Ինչի՞ կարիք ունեք դուք։

— Ինչի կարի՞ք... Յես տավիղ չունեմ, պսակ չունեմ, գլխիս շուրջը լուսապսակ չունեմ, աղոթագիրք չկա, արմավենու ճյուղ չկա,— չկա այն ամենը, վոր բնականորեն պահանջվում է այստեղ մարդու համար, բարեկամս։

Զարմացավ։ Պիտերս, ավելի զարմացած մարդու յես յերբեք չեյի տեսել։ Վերջապես նա ասաց.



— Այս ինչ զարմանալի բաների մասին եք խոսում։ Յես այդ բաների մասին վոչինչ չեմ լսել։

Մի րոպե յես նայում եյի նրան նույնպես զարմացած.

— Հույս ունեմ,— ասացի յես,— դուք վիրավորանքի տեղ չեք ընդունի, յես չեմ ուզում ձեզ անպատվել, բայց ձեզ պես մի մարդ, վոր, ինչպես յերևում է, յերկար ժամանակ ապրել է յերկնային տիրապետության մեջ, պիտի վոր, կարծում եմ, իմանա նրա սովորությունները։

— Սովորությունները,— բացականչեց նա։— Յերկինքը հսկայական վայր է, սիրելի բարեկամ։ Ահագին կայսրություններում շատ տեսակ-տեսակ սովորություններ են լինում։ Յեվ նույնիսկ փոքրիկ գաղութներում այդ սովորությունները տարբեր են, ինչպես դուք, յերևի, նկատել եք— ձեր պստլիկ Կոծիծի վրա։ Եվ ի՞նչպես եք դուք յերևակայել, թե յես իբր թե կարող եյի ուսումնասիրել անծայրածիր յերկնային պետության ամեն տեսակի սովորությունները։ Գլուխս տրաքում է, յերբ յես մտածում եմ այդ մասին։ Յես գիտեմ այն սովորությունները, վորոնք գոյություն ունեն այս տեղերում, վորտեղ ներս է լցվում նշանակված ժողովուրդը իմ դարպասներով, և լավ լսեցեք, այդ միանգամայն հերիք է մի մարդու համար, վորը դրանցով որ ու գիշեր լցրել է իր գլուխը յերեսունյոթ միլիոն տարի շարունակ։ Բայց մտածել, վոր իբր թե կարելի յե ուսումնասիրել ամբողջ յերկնքի ահռելի տարածու-

թյունների սովորությունները, ո՛, մարդ, ինչ անխելք բաներ ես ասում։ Ցես չեմ կասկածում հիմա, վոր քո նկարագրած տարորինակ պճնագեսան ընդունված է յերկնքի այն շրջանի համար, վորտեղ դուք նշանակված եյիք գնալու, բայց այստեղ առանց դրան ել վոչվոքի ուշադրությունը չեք գրավի։

Քանի վոր բանն այդպես եր, յես հանգստացա, հրաժեշտ տվի նրան և հեռացա։ Ամբողջ որը յես քաշ եյի գալիս դեպի այդ գրասենյակի նախասենյակի ամենահեռավոր ծայրը, հույս ունենալով մտնել յերկինք, բայց սխալվեցի։ Նախասենյակը շինված եր սովորական յերկնային հատակագծով և, հասկանալի յե, փոքրիկ չեր։ Վերջիվերջո յես այնպես հոգնեցի, վոր ույժ չունեյի այլևս ճանապարհս շարունակելու։ Ցես նստեցի հանգստանալու, ըսկսեցի դիտել տարորինակ ոտարերկրացիներին և փորձեցի մի բան հասկանալ նրանցից։ Ցեվ վոչինչ գլուխ չեկավ։ Նրանք չեյին հասկանում իմ լեզուն, իսկ յես չեյի հասկանում նրանցը։ Ցես ինձ սաստիկ միայնակ զգացի։ Ցես վհատվեցի, տան կարոտն զգացի և հարյուր անգամ ափսոսացի, թե ինչու յես մեռա։ Ի հարկե յես յետ դարձա։ Մյուս որը կեսորվա դեմ յես նորից վերադարձա գրանցման տեղը։

Ցես սկսել եմ հասկանալ,—ասացի յես ավագ գրագրին,— վոր մարդը բախտավոր է միայն եր յերկնքում։

—Միանգամայն ճիշտ է,—պատասխանեց նա։ —Իսկ դուք կարծում եյիք, վոր միևնույն յերկինքը կարող է հարմար լինել ամեն տեսակի մարդկանց։

—Այո՛, կար իմ մեջ մի այդպիսի կարծիք, բայց այժմ յես տեսնում եմ, վոր հիմարություն եմ արել։ Ի՞նչ ճանապարհով կարող եմ յես հասնել իմ մարդը։

Նա կանչեց կրտսեր գրագրին, վորն ինձ համար առաջ քարտեզն եր նայում, և նա ցույց տվեց ինձ ուղղությունը։ Ցես շնորհակալություն հայտնեցի և ճանապարհ ընկա, բայց գրագիրը յետևիցս կանչեց.

—Սպասեցեք մի բոպե։ Մինչև այնտեղ միլիոն մղոններ են։ Դուրս յեկեք և կանգնեցեք ցանկության այդ կարմիր գորգիկի վրա։ Խփեք ձեր աչքերը, շունչներդ պահեցեք և ցանկացեք լինել ձեր շրջանում։

—Շատ շնորհակալ եմ,—ասացի յես,—ինչու՞ չուղարկեցիք դուք ինձ այն ժամանակ, յերբ յես առաջին անգամ յեկա ձեզ մոտ։

—Մենք չափազանց զբաղված ենք այստեղ։ Դուք ինքներդ պիտի այդ մասին մտածեյիք ու խնդրեյիք մեզ։ Գնա՛ք բարի։ Դժվար թե մենք ձեզ տեսնենք ավելի շուտ քան հազար դար կամ մոտավորապես այդքան հետո։

—Վոր այդպես է՝ ցտեսություն,—պատասխանեցի յես։

Ցես թռա գորգիկի վրա, և՛ շունչս պահեցի, և՛ աչքերս խփեցի, և՛ ցանկացա լինել իմ բաժնի ոտուզման գրասենյակում։ Մի ակնթարթ հետո ինձ ծանոթ ձայնը կանչեց բանիմաց յեղանակով։

—Տավիղ և աղոթագիրք, յերկու թևեր և փայլ, չափը № 13, սանֆրանցիսկցի նավապետ Ռլայ Ստորմֆիլդի համար։ Տալ նրան մաքուր կարանտինային վկայական և ներս թողնել։

Յես բաց արի աչքերս։ Անկասկած դա Պայ—Յուտ ցեղի հնդիկներից եր, վորին յես ճանաչում եյի Ամերիկայում։ Շատ յերևելի մի տղա յեր։ Յես նրա թաղմանը ներկա եյի. թաղումն ել այն եր, վոր նրան այրեցին, իսկ մյուս հնդիկները նրա մոխիրը քսում եյին յերեսներին և ճղճղում վայրի կատուների նման։ Նա չափազանց ուրախ եր ինձ տեսնելու համար, և դու ինքդ ել պիտի իմանաս, վոր յես ել շատ ուրախ եյի։ Վերջապես յես յերկինք ընկա՝ իմ իսկական տեղը։ Շուրջս, ինչքան հնարավոր եր տեսնել, ամենուրեք գրագիրներ եյին վխտում։ Նրանք վազվզում եյին, դես ու դեն ընկնում,—զարդարելով հազարավոր ամերիկացիների, մեկսիկացիների, անգլիացիների, արաբների և ամեն տեսակի մարդկանց իրենց նոր զգեստավորումով։ Յեվ յերբ նրանք տվին ինձ իմ նոր հանդերձանքը, իսկ յես գլխիս հագցրի լուսապսակը և նայեցի հայելու մեջ, յես պատրաստ եյի ուրախությունից թռիչք գործել տան վրայով, այնքան յես բախտավոր եյի։

— Ա՛յ, ինչ եմ ասում,—բացականչեցի յես։—Հիմա յես կարգի յեկա։ Յուրյց տվեք ինձ ամպը։

Մի տասնհինգ րոպե հետո յես արդեն քայլում եյի գրասենյակից մի մղոն հեռու, ուղևորվելով դեպի ամպերի պահեստը։ Մոտ մի միլիոն մարդ քայլում եր իմ յետևից։ Շատերը փորձում եյին թռչել, բայց մի քանիսը ջարդվածքներ ստացան, և վոչ վոք հաջողություն չունեցավ։ Այդ պատճառով ել մենք վճռեցինք վոտքով գնալ, մինչև վոր սովորենք թևեր գործածել։

Ժողովուրդը խմբերով գալիս եր մեր առաջ։ Մի քանիսը տավիղներ ունեյին և ուրիշ վոչինչ։ Մյուսները՝ միայն աղոթագրքեր։ Շատերը գալիս եյին առանց իրերի։ Յեվ բոլորը ցրված ու մռայլ տեսք ունեյին։ Մի յերիտասարդ տղայի մոտ վոչինչ չեր մնացել՝ բացի լուսապսակից, և նա այդ բռնել եր իր ձեռքը։ Հանկարծ նա պարզեց այն դեպի ինձ և ասաց.

—Չե՞ք կարող այս մի բոպե բռնել։

Յեվ անհայտացավ ամբոխի մեջ։ Յես առաջ գնացի։ Ինչ-վոր կին խնդրեց վերցնել իր արմավենու ճյուղը և ապա անհայտացավ։ Մի աղջիկ սիպեց ինձ վերցնել իր տավիղը և, գրողը տանի,—նա ել անհայտացավ։ Յեվ ելի ու ելի, մինչև վոր յես բռնվեցի ամբողջովին։ Հետո ժպտալով մոտեցավ մի ծերուկ և խնդրեց պահել իր իրերը։ Յես սրբեցի ճակատս քրտինքն ու ասացի՝ բավական թթված.

— Ներեցեք, բարեկամս, յես կախարան չեմ։

Այդտեղ յես նկատեցի, վոր ճանապարհի կողքին այդ կահ-կարասիքից շատ կար կուտակված։ Հանդիստ խղճով յես ել իջեցրի այդտեղ իմ բեռը։ Յեվ նայեցի յես, Պիտերս, ու տեսնում եմ՝ բոլոր խմբերն իմ յետևի միևնույն ձևով բռնված են միևնույն իրերով։ Հանդիպող մարդիկ, հասկանում ես, խնդրում եյին մի բոպե պահել այդ իրերը։

Նրանք բոլորը թափեցին իրենց բեռը ճանապարհի կողքին, և մենք շարունակեցինք մեր ճանապարհը։

Յերբ յես բարձրացա ամպի վրա միլիոնավոր ուրիշ մարդկանց հետ միասին, յես բախտավոր եյի, ինչպես յերբեք չեյի յերազել իմ կյանքում։

— Ա՛յ այսպես,—ասացի յես,—հիմա ամեն ինչ այնպես է, ինչպես խոստացել եյին։ Յես մի փոքր կասկածում եյի, բայց հիմա իսկապես յես յերկնքումն եմ։

Յես թափահարեցի արմավենու ճյուղը մեկ—յերկու անգամ՝ ի նշան յերջանկության։ Ապա ձգեցի տավիղի լարերը և փորձեցի նվագել։ Եհ, Պիտերս, դու չես կարող յերևակայել, թե ինչ աղմուկ բարձրացրինք մենք։ Սարսափ եր ազդում մարդու վրա, ամբողջ մարմինս ցնցվում եր։ Զանազան յերգեր հնչում եյին միանգամից, և բոլորը միասին, հասկանում ես, բավական վատ եր դուրս գալիս։ Յեվ դեռ բավական շատ կային հնդիկ ցեղեր, որոնք արձակում եյին իրենց պատերազմական հարայ-հրոցը՝ խառնաշփոթություն առաջացնելով յերաժշտության մեջ։ Կամաց-կամաց յես զադարեցի նվագել։

Ինձ մոտ նստած եր բավական դուրեկան մի ծերուկ։ Յես նկատեցի, որ նա չեր դիպչում տավիղին։ Յես խրախուսեցի նրան, բայց նա ասաց, որ իր բնածին ամաչկոտության պատճառով վախենում է նվագել այդքան մեծ ամբոխի առաջ։ Կամաց-կամաց ծերուկը խոստովանվեց, որ նրան



բոլորովին դուր չի գալիս յերաժշտությունը։ Ճիշտն ասած՝ յես ել սկսեցի զգալ նույն բանը։ Բայց յես վոչինչ չասացի։ Մենք յերկուսով յերկար ժամանակ լուռ եյինք, որ ի հարկե նկատելի չեր այդպիսի տեղում։ Տասնվեց կամ տասնյոթ ժամ հետո, յերբ յես նվագում և յերգում եյի քիչ-միչ,—և միշտ միևնույն յերգը, որովհետև ուրիշ վոչ մի յերգ չգիտեյի,—յես դեն դրի տավիղը և սկսեցի զբաղվել արմավենու ճյուղով։ Հետո մենք յերկուսով ել սկսեցինք ախ քաշել։ Վերջիվերջո նա հարցրեց ինձ.

— Բացի այդ յերգը, որ դուք դողդողացնում եյիք ամբողջ որը, ել ուրիշը չգիտեք։

— Տանելի յերգ՝ վոչ մեկը,—խոստովանեցի յես։

— Իսկ դուք կարող եք սովորել որևե ուրիշ յերգ։

— Վոչ մի դեպքում։ Յես փորձեցի, բան դուրս չի գալիս։

— Բավական յերկար պիտի դուք կախ ընկնեք մի յերգից—մինչև հավիտյան, հասկանում եք։

— Սիրտս մի կտրատեք,—խնդրեցի յես,—յես առանց այն ել ճնշված դրության մեջ եմ։

Նորից մենք յերկար ժամանակ լուռ եյինք։ Յեվ նա ասաց.

— Դուք ուրախ եք, որ հիմա այստեղ եք։

— Բարի մարդ,—պատասխանեցի յես,—ճշմարիտը պիտի ասեմ։ Յես այդպես չեյի պատկերաց-

նում ինձ հավիտենական յերանությունը, յերբ յեկեղեցի եյի հաճախում։

—Մենք մի չփախչենք և մի կեսոր ման չգանք մեզ համար,—առաջարկեց նա։

—Լավ,—ասացի յես,—յերբեք իմ կյանքում այդպիսի վատ դրության մեջ չեյի յեղել։

Յեվ մենք ճամբա ընկանք։ Ամպի պահեստներին անընդհատ միլիոնավոր մարդիկ եյին մոտենում, վորոնք ցնծում եյին ու աղաղակում՝ «Ոսաննա»։ Միլիոնավոր մարդիկ անընդհատ յետ եյին դառնում, բավական ընկած տրամադրությամբ, քեզ ասեմ։

Մենք աշխատում եյինք բռնել նորեկներին, և շուտով յես իմ իրերը պահելու գործը նրանց վզին դրի մի բոպեյով։ Յես նորից ազատ մարդ դարձա և մոլեգնաբար ուրախացա։ Յեվ հենց այդ բոպեյին յես հանդիպեցի բարեհոգի Սեմ Բարտլետին, վորը վաղուց եր մեռել, ու կանգ առա նրա հետ զրուցելու։

—Ասացեք խնդրեմ,—հարցրի յես,—մինչև վերջն ել հենց այսպես պիտի լինի։ Այստեղ ել ուրիշ բան չկա՞։

—Յես շատ շուտ կուզեմ ձեր սխալ կարծիքն այդ խնդրի մասին,—ասաց նա։—Այն բոլորը, վոր գրված է աստվածաշնչում, մարդիկ յերկրի վրա տառացիորեն են հասկանում. յերբ գալիս են յերկինք, առաջին գործն այն է լինում, վոր պահանջում են լուսապսակ, տավիղ և այլն։ Վոչ մի անվնաս բան չեն մերժում այստեղ մարդուն, յեթե նա առողջ գիտակցության մեջ է խնդրում։



Ուստի առանց մի խոսք ասելու այդ իրերն ել են մատակարարում։ Մարդիկ զբոսնում են, յերգում են, խաղում ամբողջ որը, դուք ել լսել եք նրանց այդ համերգում։ Վոչվոք չի բացատրում նրանց, վոր բոլորովին այդ չե յերկնային կյանքի եությունը։ Այդպիսի կյանքի դժվար թե մարդ կարողանա դիմանալ մի շաբաթից ավելի՝ առանց իր առողջությունը կորցնելու։ Ամպերի պահեստները տեղավորված են այնպես, վոր հին բնակիչներին ադմուկը չանհանգստացնի. դրա համար ել այնտեղ ամեն մեկին թույլատրված է անել այն ամենը, ինչ վոր ցանկանում է, մինչև վոր ինքը խելքի կգա։ Այժմ մի բան պահեք մտներդ՝ յերկինքն, իսկապես վոր, ամենայերանելի և ամենաղուրեկան տեղն է, վոր կարող է լինել։ Յեվ միևնույն ժամանակ ամենագործարար տեղն է այն բոլոր տեղերից, վորոնց մասին դուք լսել եք։ Այստեղ բոլորովին չկան պարապ մարդիկ՝ առաջին որից հետո։ Յերգել և թափահարել արմավենու ճյուղերը մինչև հավիտյան՝ դրավիչ բան է թվում, յերբ այդ մասին լսում ես քարոզիչի ամբիոնից, բայց թանկագին ժամանակն սպանելու համար մարդը դրանից ավելի վատ բան չի հնարել։ Այդ կլիներ ճռվողող հիմարների յերկինք, այդպես չե՞։ Հավիտենական հանգստությունը մխիթարական է հնչում յեկեղեցու ամբիոնից, ճիշտ է։ Դե դուք մի անգամ փորձեցիք այդ բանը և տեսաք, վոր այդ այնքան ել հեշտ բան չի։ Այո, Ստորմֆիլդ, այդպիսի մի մարդ, վորպիսին դուք եք, վորն իր կյանքում միշտ աշխատել է ու հուզվել, կես տարի չքաշած՝ կխելագարվի յերկնքում, յեթե նա վո-

չինչ չունենա անելու։ Յերկինքն ամենավերջին տեղն է հանգստի համար։ Կարող եք դրա համար գրաղ գալ՝ ում հետ ուզում եք։

Յես ասացի.

— Սեմ, յես ուրախ եմ, վոր լսում եմ, այս քանը,և ուրախ եմ, վոր յես սաստիկ սխալվում եյի Հիմա յես գոհ եմ, վոր ընկել եմ այստեղ։

Նա հարցրեց.

— Նավապետ, դուք թերևս հոգնել եք։

Յես ասացի.

— Սեմ, խոսք չեմ գտնում այդ արտահայտելու։ Հոգնել եմ շան պես։

— Հը՛մ, այդպես։ Դուք մի լավ քուն վաստակեցիք և այդ քունը դուք պիտի ստանաք։ Դուք հիմա լավ ախորժակ եք պահել և ճաշը կվայելեք։ Այստեղ ել, ինչպես և յերկրի վրա, պետք է վաստակել բավականությունն ուղիղ և ազնիվ ճանապարհով, նախ քան այն վայելելը։ Դուք չեք կարող առաջ վայելել և հետո վաստակել։ Բայց կա և մի տարբերություն — այստեղ դուք ինքներդ եք ընտրում ձեզ համար մի զբաղմունք, և յերկնքի բոլոր ուժերը ձեզ կոգնեն, յեթե դուք ժրաջան աշխատեք։ Այդ մարդը, վորը յերկրի վրա կոշկակար եր, բայց բանաստեղծի հոգի ուներ, այստեղ կոշիկ կարելով չի զբաղվի։

— Խելացի բան է և ճիշտ,— ասացի յես,— աշխատանք՝ ինչքան ուզես, և այնպիսի աշխատանք, վորի մասին դուք ջերմորեն յերազում եյիք։ Վոչ ցավ կա, վոչ տանջանք...

— Ո՛, կացեք։ Այստեղ հաճախ ցավեր լինում



են, բայց նրանք չեն սպանում։ Այստեղ շատ տանջանքներ կան, բայց նրանք յերկարատև չեն։ Դուք գիտեք՝ բախտն — ինքն ըստ ինքյան — գոյություն չունի.— նա լինում է միայն այն ժամանակ, յերբ համեմատում ես այն վորևե անդուրեկան բանի հետ։ Ահա և ամենը։ Չկա այնպիսի մի բան, վորի մասին դուք կարողանայիք ասել — ահա բախտն ինքն ըստ ինքյան.— այդ կարող է բախտ համարվել՝ միայն հակադրվելով մի ուրիշ բանի, և հենց վոր նորությը ձանձրացնում է, բախտը պոչը քաշում է, և դուք փնտռում եք մի վորևե նոր բան։ Դե՛ գիտես, յերկնքում ցավեր ու տառապանքներ՝ ինչքան ուզես,— հետևաբար, այստեղ շատ կան ամեն տեսակի հակադրություններ, և բախտն անվերջ է։

Յես ասացի.

— Ամենազգայունն ու խելացին յերկինքն է, Սեմ, չնայած նա ել նման չի իմ յերևակայածին, ինչպես նման չի կենդանի աղջիկը մոմե տիկնիկին։

Առաջին ամսվա ընթացքում յես թափառում եյի յերկնային պետության մեջ, բարեկամներ եյի ձեռք բերում, ուսումնասիրում եյի յերկիրը և վերջապես լավ տեղավորվեցի մի դուրեկան շրջանում, վորպեսզի հանգստանամ՝ ճանապարհս նորից շարունակելուց առաջ։ Յես շարունակեցի ծանոթություններ ձեռք բերել և տեղեկություններ եյի հավաքում։ Մենք յերկար զրուցում եյինք մի ծեր ճաղատ հրեշտակի հետ, վորի անունն է Սեն-

դի—Մակ—Ուիլյամս։ Նա Նյու-Ջերսիի[1]) ինչ-վոր տեղից եր։ Բավական յերկար խոսեցինք մենք նրա հետ։ Սովորաբար մենք նրա հետ պառկում եյինք տաք կեսորներին ժայռի շվաքում՝ մարգագետնի վրա, վոր բավական բարձր եր ընկած և հեռու յեր նրա լոռամրգու ագարակի ճահճային ցեխից, —այնտեղ մենք զրուցում եյինք ամեն տեսակի բաների մասին՝ մեր չիբուխները քաշելով։

Մի անգամ յես հարցրի նրան.

—Քանի՞ տարեկան եք մոտավորապես, Սենդի։

—Յոթանասունյերկու։

—Այդպես ել կարծում եյի։ Իսկ վաղուց ե, վոր դուք յերկնքումն եք։

—Քսանյոթ տարի։

—Իսկ քանի՞ տարեկան եյիք, յերբ համբարձաք այստեղ։

—Դե յոթանասուն յերկու, ի հարկե։

—Դուք այդ չեյիք ուզում ասել։

—Ինչու՞ վոչ այդ։

—Վորովհետև յեթե դուք յոթանասունյերկու տարեկան եյիք այն ժամանակ, ապա հիմա, բնականաբար, իննսունինն տարեկան եք։

—Չե, իննսունինն չեմ։ Յես մնում եմ այնպես, ինչպես յեկել եմ։

—Լավ,—ասացի յես։—Յես հենց ձեզ ուզում եյի, այդ մասին հարցնել։ Այնտեղ ներքևում յես միշտ մտածում եյի, վոր յերկնքում մենք՝ բոլորս յերիտասարդ,փայլուն և սրամիտ կլինենք։

[1]) Նյու—Ջերսի—Հյուսիսային Ամերիկայի մի նահանգ։



—Դե դուք կարող եք յերիտասարդ դառնալ, յեթե ուզում եք։ Պետք է միայն ցանկանալ։

—Իսկ ինչու՞ դուք չցանկացաք։

—Յես ցանկացա։ Բոլորն են այդպես անում։ Դուք ել վորևե կերպ կփորձեք, յերևի։ Բայց դուք շատ շուտ կձանձրանաք այդ փոփոխությունից։

—Ինչու՞։

—Յես ձեզ կասեմ։ Գիտեմ, դուք միշտ ծովազբնաց եք յեղել։ Իսկ չե՞ք փորձել դուք մի ուրիշ գործով զբաղվել։

—Այո՛, յես փորձեցի մեկ անգամ հանքերի նպարեղենի խանութում աշխատանքի նստել։ Բայց չդիմացա։ Ձանձրալի յե—վոչ շարժում կա, վոչ փոթորիկ, վոչ կյանք կա շրջապատում։ Վոչ մեռած ես, վոչ կենդանի—ճիշտն ասած՝ յերկուսը մեկտեղ։ Իսկ յես ուզում եյի կամ մեկը, կամ մյուսը։ Շատ շուտով յես փակեցի խանութը և ուղևորվեցի դեպի ծով։

—Ճիշտ ե, խանութպանին այդ սազում ե, իսկ ձեզ—վոչ։ Գիտե՞ք ինչ, դուք սովոր չեք դրան։ Յես թողել եմ յերիտասարդ լինելու սովորությունը և յերիտասարդացման մեջ վոչ մի հետաքրքրություն չգտա։ Յես դարձա ուժեղ ու զեղեցիկ, և գանգուր մազեր բուսեցին, և թևերս նույնպես—աշխույժ թևեր, թիթեռնիկի թևերի պես։ Յես թրև եյի գալիս յերեկույթներին, զբոսնում եյի ջահել տղերքի հետ, աշխատում եյի զվարճանալ և զանազան անմտություններ դուրս տալ աղջկերքի հետ, բայց բան դուրս չեկավ։ Չկարողացա հարմարվել և սաստիկ ձանձրացա։ Յես ու-

զում եմ մի քիչ շուտ պառկել և շուտ վեր կենալ, ուզում եմ վորևե բան անել։ Իսկ աշխատանքից հետո ուզում եմ հանգիստ նստել, ծխել և մտածել—այս ու այն կողմ չվազվզել թեթևսոլիկ այծիկների հետ։ Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչքա՞ր կրեցի ես յերիտասարդ յեղածս ժամանակ։

—Իսկ յերկա՞ր մնացիք յերիտասարդ։

—Միայն յերկու շաբաթ։ Միանգամայն հերիք եր ինձ համար։ Ա՜խ, ինչպես ես մենակ եմ։ Հասկանում եք, ես լի եմ յոթանասունյերկու տարեկանի գիտությամբ և փորձառությամբ, և Ջեքիլ-Ջուհուլի ամենախոր հուզումներն ինձ համար հասարակ այբուբեն եին։ Իսկ լսել նրանց վիճաբանությունները—անտանելի յե։ Յեվ ես այնպիսի մի ցանկություն զգացի՝ վերադառնալ իմ առաջվա սովորություններին և լուրջ խոսակցություններին, վոր փորձում եմ քսվել ծերունիներին, բայց դրանցից ել բան դուրս չեկավ։ Նրանք ինձ ընդունեցին իբրև մի ինքնապատան պոտկերեսի և դեպի ինձ սառը վերաբերմունք եին ցույց տալիս։ Ինձ համար յերկու շաբաթը բավական եր։ Ցեռ ուրախ եմ վերադարձնելու իմ ճաղատ գլուխը և իմ նախկին քնկոտ մըտածմունքները ժայռի կամ ծառի տակերում։

—Այդպես ուրեմն,—հարցրի ես,—դուք յերևի ուզում եք ասել, վոր ուզում եք ընդմիշտ մնալ ձեր յոթանասունյերկու տարեկան հասակում։

—Չգիտեմ, և ես առանձնապես չեմ պնդում այդ։ Բայց ես միտք չունեմ այլևս վերադառնա-



յու իմ 25 տարեկան հասակին—արդեն իմացա, հերիք է, շատ լավ իմացա։ Իմ հայացքները յայնացել են այս վերջին քսանյոթ տարվա ընթացքում, ես հաճույքով սովորում եմ, միշտ սովորում եմ, բայց ես չեմ մեծանում։ Այսինքն մարմնապես, իսկ իմ բնավորությունը մեծանում է, ուժեղանում է, հասունանում և քանի գնում՝ բավարարված է զգում իրեն։

—Իսկ յեթե մարդը գալիս է այստեղ 90 տարեկան հասակում, մի՞թե նա չի ուզում յերիտասարդանալ։

—Ի՞ հարկե ուզում է։ Նա իրեն դարձնում է տասնչորս տարեկան, փորձում է մի քանի ժամ և զգում է, վոր ինքը հիմար է։ Բարձրացնում է տարիքը մինչև 20-ը։ Բայց դրանից ել բան չի դուրս գալիս։ Փորձում է յերեսունը, հիսունը, ութսունը և - վերջապես, ինսունը, և այդտեղ է, վոր իրեն ավելի լավ է զգում, այն նույն դրության մեջ, վորը բոլորից ավելի սովորական է նրա համար։ Կամ, յեթե նրա խելքն սկսել է պակասել յերկրի վրա ութսուն տարեկան հասակից, ապա նա ընտրում է այդ տարիքը։ Նա կանգ է առնում այն դրության վրա, վորտեղ նրա բանականությունը գտնվում եր իր ամենաբարձր կետի վրա, վորովհետև այդտեղ նրա հաճույքն ել ամենից շատ եր և նրա սովորություններն ամենից ավելի կայուն եին ու կարգավորված։

—Իսկ քսանհինգ տարեկան տղան հենց այդ տարիքում ել մնում է։

—Յեթե նա հիմար է՝ այո։ Բայց յեթե նա

ճարպիկ է, փառասեր և ժրաջան, ապա գիտությունն ու փորձառությունը փոխում են նրա սովորությունները, փոխում են մտքերը և հակումները, և նա գտնում է ամենամեծ բավականությունն իրենից մեծ մարդկանց շրջանում։ Յեվ նա ավելացնում է իր մարմնի վրա այնքան տարի, որքան պետք է, որպեսզի իրեն հարմար զգա ու չընկճվի ընտիր հասարակության մեջ։ Նրա մարմինն ընդունում է, նրա ցանկության համաձայն, այն տարիքի տեսքը, որը համապատասխանում է նրա զարգացողության, և կամաց-կամաց մարդն արտաքուստ ճաղատ ու կնճռոտ է դառնում, իսկ ներքուստ՝ խմաստուն ու խորունկ։

— Մանուկներն ե՞լ այդպես։

— Մանուկներն էլ։ Ա՛խ, ինչ եղեր եյինք մենք յերկրի վրա այդ տեսակետից։ Մենք կարծում եյինք, որ յերկնքում հավիտյան յերիտասարդ կմնանք։ Իսկ թե ինչ ձևի յերիտասարդ — այդ մասին մենք չեյինք մտածում, կամ, ասենք, բոլորս էլ միատեսակ եյինք մտածում։ Յերբ յես յոթ տարեկան տղա եյի, յերևի մտածում եյի, որ յերկնքում կդառնամ տասներկու տարեկան։ 12 տարեկան յեղածս ժամանակ յերազում եյի, որ յերկնքում տասևութ կամ քսան տարեկան լինեմ։ Քառասուն տարեկան ժամանակս յես արդեն սկսեցի նահանջել։ Հիշում եմ, յես հույս ունեյի, որ մենք բոլորս յերկնքում յերեսուն տարեկան կլինենք։ Վոչ չափահաս և վոչ էլ յերեխա յեղած ժամանակ մարդս յերբեք չի գիտակցում, որ իր ունեցած տարիքը հենց ամենալավն է,— չե՛, նա կարծում է ավելի լավ կլինի, յեթե մի քանի տարով մեծ կամ փոքր լինի։ Հետո նա յենթադրում է, որ այդ տարիքը յերանելի կլինի անխտիր բոլորի համար — յերկնքում։ Յեվ նա պատրաստվում է տեսնելու բոլորին այդ՝ ընդմիշտ նույն տարիքում, և կարծում է, որ բոլորը հաճույքով են ընդունում այդ դրությունը։ Յերևակայեցեք՝ ինչ պատկեր։ Յերկինքն ամբողջովին լիքն է յոթ տարեկան պստիկ-ճատիկ յերեխաներով, որոնք ողակապեր են գլորում, ավազի մեջ խաղում են։ Կամ ամենուրեք ման են գալիս անշնորք, կասկածամիտ, քաղցրավուն տասնինն տարեկան պատանիներ, կամ քաջառողջ յերեսնամյա տղերք, վողջամիտ, լի փառասիրությամբ, բայց ձեռքն ու վոտքը շնթայած միայն այդ տարիքին-իր շրջանակներով, ինչպես ստրուկները տաժանքի նավակի վրա։ Պատկերացրեք ձեզ տաղտկալի միապաղաղությունն այդ հասարակության, որը բաղկացած է նույն տարիքի մարդկանցից, միևնույն հայացքները, սովորությունները, ճաշակները և զգացմունքներն ունեցող մարդկանցից։ Յերևակայեք, թե վորքան լավ է այդ տեսակետից յերկիրն իր բնավորությունների, դեմքերի և տարիքների բազմազանությամբ, իր անթիվ-անհամար շահերի աշխույժ բաղխումներով, իր բազմազան հասարակության ամենահաճելի խառնաշփոթությամբ։

— Կացեք,— բացականչեցի յես։— Գիտե՞ք՝ ինչ է դուրս գալիս ձեր ասածից։

— Հ՛ը, ի՞նչ է դուրս գալիս։

—Ձեր ասածից դուրս է գալիս, վոր յերկինքը հարմար է մի տեսակետից, բայց և անպետք ու չար—մի ուրիշ տեսակետից։

—Ի՞նչ եք ուզում ասել դուք։

—Դե,—ասացի յես,—վերցրեք որինակի համար մի մայր, վորը կորցրել է յերկրի վրա իր յերեխային և...

—Սը՛սս...— ընդհատեց նա.—Նայեցեք։

Մի կին եր այդ։ Միջակ տարիքի, բայց ճերմակած մազերով։ Նա գնում եր դանդաղ, գլուխը կախ գցած, և նրա թևերը կախ եյին ընկել թարշամած ու խոնարհված։ Նա ծայր աստիճանի հոգնած տեսք ուներ, և նա լաց եր լինում, խեղճը։ Նա անցավ մեր մոտով՝ առանց գլուխը բարձրացնելու, արցունքները գլորվում եյին նրա յերեսով, և նա չեր տեսնում մեզ։ Սենդին ասաց կամաց ու քնքշորեն՝ խղճահարությամբ լցված.

—Նա փնտռում է իր յերեխային։ Չե՞, ասենք գտավ նրան։ Ո՞, ինչպես փոխվել է նա։ Ասենք՝ յես անմիջապես ճանաչեցի նրան, չնայած քսանյոթ տարի չեյի տեսել նրան։ Յերկրի վրա նա մի ջահել մայր եր, մոտ քսաներկու—քսանչորս տարեկան—ծաղկյալ համակրելի ու գրավիչ։ Իսկական ծաղիկ։ Յեվ ամբողջ սրտով, ամբողջ հոգով նա խորասուզված եր իր յերեխայի մեջ, իր փոքրիկ յերկամյա աղջկա մեջ։ Յեվ յերեխան մեռավ, իսկ նա ցնորվեց վշտից, միանգամայն ցնորվեց։ Յեվ միայն մի միտք մնաց նրան, վոր նորից կտեսնի իր աղջկան յերկնքում։ «Յեվ յերբեք չենք բաժանվի իրարից»,—ասում եր նա, նորից կրկնելով. «Յերբեք չենք բաժանվի»։ Յեվ այդ խոսքերը նրան բախտավոր եյին դարձնում։ Այդ բոպեներին նա ուրախանում եր։ Յեվ յերբ յես մեռնում եյի, քսանյոթ տարի առաջ, նա ինձ խնդրում եր՝ ամենից առաջ տեսնել իր աղջկան և ասել նրան, վոր մայրը շտապում է գալ նրա մոտ—«շուտով, շուտով, շատ շուտով, նա հույս ունի և հավատում է»։

—Ա՛խ, ինչ խղճալի բան է, Սենդի։

Նա լռեց՝ նայելով ներքև և միտք անելով։ Հետո տխուր կերպով ասաց.

—Յեվ ահա նա յեկավ։

—Հետո, շարունակեցեք։

—Ստորմֆիլդ, գուցե նա չի գտել իր յերեխային՝ բայց, կարծում եմ, վոր գտած կլինի։ Ինձ այսպես է թվում։ Յես այդպիսի դեպքեր առաջ եկ գիտեյի։ Նա, հասկանում եք, իր յերեխային պահպանել է հիշողության մեջ այնպես, ինչպես յեղել է նա այն ժամանակ, յերբ նրան թողնում եր իր ձեռքերի վրա—այդ կլորիկ յերեսով արարածին։ Բայց այստեղ աղջիկը չուզեց մնալ իր մանուկ հասակում։ Չե՞, նա ցանկացավ մեծանալ և կատարեց այդ։ Յեվ այս ամբողջ քսանյոթ տարվա ընթացքում աղջիկն ուսումնասիրում եր այն գիտությունները, վորոնք տրված են այստեղ յուրացնելու համար։ Նա սովորում է և սովորում, ավելի ու ավելի շատ է յուրացնում, և վոչինչ չի ուզում իմանալ, բացի ուսումնասիրությունը և խորիմաստ հարցերի քննարկումն իրեն մարդկանց հետ։

— Հետո։

— Ստորմֆիլդ, դուք չՔՔ հասկանում։ Նրա մայրը լավ ծանոթ է լոռամրգուն, գիտե, թե ինչպես պետք է հավաքել այն, ինչպես պահել և ինչպես ծախել։ Ուրիշ վոչինչ։ Նա և իր աղջիկն այժմ այնպես կարող են ապրել իրար հետ, ինչպես ճահճային կրիան դրախտահավի հետ։ Խեղճ կին, նա սպասում եր իր յերեխային, վորպեսզի նրան ձեռքերի վրա խաղացնի։ Կարծում եմ՝ հիասթափությունն ուղղակի սպանել է նրան։

— Սենդի, ինչ պիտի անեն նրանք։ Ընդմիշտ դժբախտ պիտի մնան յերկնքում։

— Չե նրանք կհանդիպեն իրար ու կամաց-կամաց կմոտիկանան։ Վոչ այս տարի, վոչ էլ մյուս տարի։ Կամաց-կամաց։

## 2

Շատ հիմար բան պատահեց իմ թևերին։ Յերգեցիկ խմբից ծլկվելուց հետո, մյուս որը յես փորձեցի մեկ-յերկու անգամ թռչել, բայց վոչ առանձին հաջողությամբ։ Առաջին անգամ յես հազիվ յերեսուն քայլ արի, դիպա մի իղանդացու և վայր գցեցի նրան—ասենք՝ ավելի շուտ մենք միասին գլխկոնձի տվինք։ Հետո յես դիպա մի յեպիսկոպոսի և ի հարկե նույնպես վայր գցեցի նրան։ Մենք իրար մի քանի խիստ խոսքեր ասացինք, և յես հայտնեցի իմ ափսոսանքը, վոր յես այնքան ամուր չխփեցի ծերուկին, վորպեսզի նա մեռներ և նրա հետ՝ այն միլիոնավոր



անծանոթները, վորոնք նայում եյին ինձ և ծաղրում։

Յես տեսնում եյի, վոր չեմ կարողանում ղեկավարել թռիչքը և այդ պատճառով էլ ճիշտ չը-գիտեմ, թե թռչելիս վորտեղ կընկնեմ։ Որվա մնացած մասը յես ման եյի գալիս վոտքով, թեվերս կախ գցած։

Մյուս որն առավոտը շուտ յես գնացի մի ամայի տեղ, վորպեսզի մի քիչ մարզվեմ։ Յես բարձրացա մի բավական բարձր ժայռի վրա, հաղորդեցի կերպով վեր ցատկեցի և նետվեցի դեպի ներքև՝ նշան բռնելով մի թփի, վորը գտնվում եր ժայռից մոտ յերեք հարյուր քայլի վրա։ Բայց յես հաշվի չառա քամին։ Նա փչում եր մի կողքից, և յես բավական շեղվեցի թփի ուղղությունից։ Յես սկսեցի ավելի կամաց թափահարել աջ թևս և ուժեղացրի ձախը, բայց բան դուրս չեկավ։ Յես տեսնում եյի, վոր քիչ է մնում յերկու թևս էլ կոտրեմ։ Այդ պատճառով յես կախ գցեցի թևերս և թրմփացի գետին։ Յես նորից բարձրացա ժայռը և նորից փորձեցի։ Յես ուղղությունը վերցրի թփից բավական աջ, վորպեսզի գրեթե քամուն հակառակ թռչեմ։ Յես կանոնավոր եյի տշխատում, բայց վատ եր դուրս գալիս։ Ինձ համար պարզվեց, վոր հանդիպական քամու համար թևերը բավական անպետք են։ Քամու ուղղությամբ մարդը բավական հաջող է լողում, իսկ քամուն հակառակ բան դուրս չի գալիս։ Յես տեսնում եյի, վոր յեթե ցանկանամ տանից բավական հեռու թռչել վորևե մեկին տեսնելու համար, և յերու թռչել վորևե մեկին տեսնելու համար, և յե-

թե քամին հանդիպական լինի, ապա յես գուցե յերկաթ որեր ստիպված լինեմ սպասել հաջող թռիչքի։ Յեվ պարզ եր, վոր այդ խաղերը բոլորովին անպետք են փոթորկի ժամանակ։ Յեթե դուք փորձում եք թռչել քամուն հակառակ, ստացվում է ինչ-վոր խայտառակ բան, վորովհետև դուք չեք կարող կրճատել առագաստները,—հասկանում եք, առագաստները հավաքել,—դուք պիտի ծալեք թևերն ամբողջովին, սեղմեք բոլոր փետուրները ձեր կողքերին։ Դե կթխվեք գետին, ի հարկե։ Դուք այդտեղ կարող եք ամրացնել խարիսխը, գլուխներդ դեպի քամին—այդ ամենից լավ է։ Յեթե դուք ուզենաք նորից փորձել, դուք փորձանքի մեջ կընկնեք, հավանորեն։

Մի-յերկու շաբաթ հետո, յերեքշաբթի որը, յես ծերունի Սենդի Մակ-Ուլյամսին մի գրություն ուղարկեցի, խնդրելով նրան գալ մյուս որն ինձ մոտ մաննայով և լորերով նախաճաշելու։ Յեվ ամենից առաջ, ներս մտնելով, նա կկոցեց աչքերը խորամանկորեն և ասաց.

—Հը՛, նավապետ, ի՞նչ եք արել ձեր թևերը։

Յես իսկույն հասկացա, վոր այստեղ վորոշ ծաղր եր թաքնված այդ լաթ-լութի մասին, բայց յես ցույց չտվի, թե գլխի յեմ ընկնում։

Յես միայն պատասխանեցի.

—Տվել եմ, վոր լվանան։

—Այո՛,—ասաց նա բավական չոր,—նրանք սովորաբար տրվում են լվանալու—մոտավորապես հենց այդքան ժամանակամիջոցում,—յես հաճախ



նկատել եմ այդ։ Զահել հրեշտակները բավական մաքրասեր են։ Յե՞ր կվերադարձնեն ձեզ ձեր թևերը։

—Եզուց չե մյուս որը։

Նա ինձ աչքով արեց ու ծիծաղեց։ Յես ասացի.

—Սենդի, թողնենք այդ։ Բարեկամների մեջ գաղտնիք չպետք է լինի։ Յես նկատել եմ, վոր դուք յերբեք թևեր չեք կրում, և շատ ուրիշները՝ նույնպես։ Յես ինքս ինձ եշի տեղ եմ դնում, չե՞։

—Այդպիսի մի բան։ Բայց այդ մի մեծ փորձանք չե։ Մենք բոլորս էլ սկզբում նույնն ենք անում։ Այդ միանգամայն բնական է։ Յերկրի վրա մենք, գիտե՞ք, շատ հիմար ձևով ենք պատկերացնում մեզ յերկինքը։ Հրեշտակները մեզ մոտ նկարներում անպայման թևեր ունեն։ Այդ, ի հարկե, այդպես էլ պիտի լինի։ Բայց մենք կարծում ենք, վոր նրանք հենց այդպես էլ թռչում են ամեն տեղ իրենց թևերով, իսկ այդ դատարկ բան է։ Թևերը—միայն ձևի համար են—պրծավ գընաց։ Յերբ հրեշտակներն, այսպես ասած, յերթի մեջ են, նրանք անպատճառ թևերով են։ Դուք յերբեք չեք տեսնի մի հրեշտակ, վորը վորև է հանձնարարությամբ տեղ գնա առանց թևերի, այնպես, ինչպես յերբեք չեք տեսնի մի սպայի, վորը զինվորական դատարանում դատի նստած լինի առանց համազգեստի, կամ նամակները ցրող նամակատարին, կամ վոստիկանին դիտակալության ժամանակ այնպայմանորեն իրենց լրիվ զգեստավորումով։ Բայց հրեշտակները չեն թռչում թևերով։

վերով—վոչ։ Թևերը ցույցի համար են, վոչ թե գործածելու։ Հին, վորձված հրեշտակները, ինչպես մշտական բանակի սպաները—ծառայությունից դուրս հասարակ հագուստով են ման գալիս։ Իսկ նոր հրեշտակները յերկրապահների պես—յերբեք համազգեստը չեն հանում, ցցում են թևերը՝ դիպչելով սրան նրան և նեղություն տալով անցու դարձ անողներին, թափահարում են թևերն այստեղ, այնտեղ և ամեն տեղ, միշտ յերևակայելով, վոր իրենք գրավում են զմայլված հայացքները,—մի խոսքով, կարծես, ամենաաչքի ընկնող մարդիկ լինեն յերկնքում։ Ցեվյերը դրանցից մեկն ու մեկն ուզում է իրեն ցույց տա և պատիվ է տալիս, բարձրացնելով թևերից մեկը և իջեցնելով մյուսը, դուք իսկույն գլխի յեք ընկնում, թե ինչպես նա մտածում է ինքն իրեն. «Ա՛յ, թե մի կտեսներ ինձ հիմա Արկանսուցի Մերի—Աննան։ Նա կափսոսար, վոր ինձ չուզեց առնել»։ Չե՛, թևերը ցույցի համար են, միայն ցույցի համար—ուրիշ վոչինչ։

— Դուք գուցե և ճշմարիտ եք, Սենդի,—վրաբերի յես։

— Դե նայեցեք դուք ձեզ վրա,—ասում եր նա։— Դուք ստեղծված չեք թևերի համար, դուք այդպիսի մարդ չեք։ Դուք գիտեք, թե քանի՞ տարի թռչում եյիք յերկրից այստեղ, իսկ դուք սրանում եյիք ավելի արագ, քան թընդանոթի ռումբը։ Իսկ յեթե դուք դրա համար



ստիպված լինեյիք թևերը թափ տալ, չեր անցնի արդյոք մի ամբողջ հավիտենականություն՝ մինչև ձեր այստեղ հասնելը։ Անպայման։ Դե հրեշտակները ստիպված են անցնել յերկիրը,—միլիոնավոր հրեշտակներ,—ամեն որ, վոր տեսիլքներում յերևան մեռնող յերեխաների և հասարակ մարդկանց աչքին, ինչպես դուք գիտեք,—այդ բավական դժվար խնդիր է։ Նրան յերևում են թևերով, ի հարկե, վորովհետև այնտեղ նրանք իրենց պաշտոնեական պարտականություններն են կատարում և, բացի այդ, մեռնող մարդիկ նրանց հրեշտակի տեղ չեյին դնի, յեթե նրանք առանց թևերի լինեյին։ Բայց դուք կարծում եք, թե նրանք իրենց թևերով թռչում են։ Պարզ է, վոր վոչ։ Թևերը կմաշվեյին կես ճանապարհին։ Նույնիսկ փետուրները բոլորը կթափվեյին, և թևերի կմախքը նույնքան կմերկանար, վորքան մանկական փառանի փայտիկները, վորոնց վրա դեռ թուղթ չեն կպցրել։ Տարածությունները յերկնքում բիլիոնավոր անգամ մեծ են։ Հրեշտակները սլանում են այս ու այն կողմ բոլոր յերկինքներում ամեն որ։ Կարող են, մի թե, նրանք այդ անել միայն իրենց թևերով։ Չե՛, ի հարկե։ Նրանք թևերը կրում են ձևի համար, իսկ անցնում են ուղած տարածությունները մի ակնթարթում՝ իրենց ցանկության միջոցով։ Արաբական հեքիաթների միջի ցանկության գորգիկները—ա՛յ, յերևելի միտք է այդ, իսկ մեր յերկրային պատկերացումը հրեշտակների մասին, վորոնք զարհուրելի տարածություններ անցնում են իրենց անշնորք թևերով —հիմար միտք է։

Մեր յերկու սեռի յերիտասարդ սրբերը միշտ թեվեր են կրում—փայլուն, կարմիր. յերկնագույն, կանաչ, վոսկեգույն, խայտաբղետ, ծիածանագույն, ողակներով և գոլերով—և վոչ վոք նրանց չի մեղադրում։ Այդ միանգամայն հասկանալի յե նրանց տարիքի համար։ Գեղեցիկ բաներն ել սազում են յերիտասարդ մարդկանց։ Թևերն ամենից ավելի աչքի ընկնող և սիրելի մասն են նրանց պրճնազգեստի փայլը ընդունված չի։

Ե՛հ,—ասացի յես,—իմ հանդերձանքը յես կոխել եմ պահարանը, և թող այնտեղ պառկի, քանի կեղտոտ ե։

—Այո՛, կամ մինչև հանդիպումը։

—Իսկ այդ ի՞նչ բան ե։

—Ա՛յ, յեթե ցանկանաք, կտեսնեք այս գիշեր։ Այստեղ Ջերսի-Սիտիեցի մի պանդոկատիրոջ պիտի դիմավորեն։

—Պատմեցեք։

—Այդ պանդոկատիրոջ ճշմարիտ հավատի յեն բերել Նյու-Յորկում՝ ավետարանականների ժողովում, և շոգենավով տուն եր վերադառնում։ Տեղի ունեցավ նավերի ընդհարում, և պանդոկատերը խեղդվեց։ Նա այն մարդկանցից ե, վորոնք կարծում են, վոր յերկնքում բոլորը կցնորվեն ուրախությունից, յերբ իմանան, վոր իր նման մի պնդաճակատ մեղավոր զղջացել ե։ Նա այժմ ըսպասում ե, վոր ամբողջ յերկնքով դուրս կթափվեն նրան դիմավորելու և կաղաղակեն՝«Ովսաննա»։ Նա կարծում ե, թե ամբողջ յերանելի արքայության մեջ այդ որը պիտի խոսեն միայն իր մասին։



Պանդոկատերը յենթադրում ե, վոր այստեղ վատից չեր յեղել այնպիսի իրարանցում, ինչպես լինելու յե իր ժամանման դեպքում։ Ցեվ յես միշտ նկատել եմ այդ տարորինակությունը վորևե մեռած պանդոկատիրոջ կողմից—նա վոչ միայն սպասում ե, վոր բոլոր ձեռքերը կծափահարեն իրեն, այլ և հույս ունի, վոր իրան կհանդիպեն ջահաթափորով։

—Ցեվ ուրեմն հիասթափվո՞ւմ ե։

—Ձե՛, չի հիասթափվում։ Այստեղ վոչվոք չի հիասթափվում։ Ինչ վոր մարդ ցանկանում ե այստեղ գալուց հետո—խելացի բան, ի հարկե, և վոչ վնասակար,—այդ նա ստանում ե։ Այստեղ միշտ կգտնվեն մի քանի միլիոն կամ բիլիոն յերիտասարդ մարդիկ, վորոնց համար ամենաառաջին զվարճությունն այն ե, վոր ամենալավ բղավեն իրենց թոքերով մեկ, թափահարեն ջահերն ու ժամանակ անցկացնեն պանդոկատիրոջ հաշվին։ Այդ շոյում ե պանդոկատիրոջ ինքնասիրությունը, այդ սքանչելի կվարտիրոջ ինքնասիրությունը, այդ ճությունն ե պատճառում յերիտասարդներին, այդ վոչվոքի վնաս չի տալիս, այդ վոչինչ չի նստում, և այդ պահպանում ե յերկնքի փառքը, վորտեղ բոլոր յեկվորները բախտավոր են և գոհ։

—Շատ գեղեցիկ։ Յես պատրաստ կլինեմ և կնայեմ, թե ինչպես են դիմավորում պանդոկատիրոջը։

—Այստեղ լրիվ կերպով պետք ե զգեստավորվել։ Դուք, գիտեք դրեք ձեր թևերը և մյուս բոլոր բաները։

—Իսկ ուրիշ ի՞նչ։

—Լուսապսակը, տավիղը, արմավենու ճյուղը և այլն։

—Ե՛հ,—ասացի յես,—անհարմար է խոստովանել, բայց յես դեն եմ գցել դրանք հենց նույն որը, յերբ յերգեցիկ խմբից փախա։ Ցեռ ուրիշ վոչինչ չունեմ, բացի այդ քղամիդը և թևերը

—Վոչինչ։ Ձեր դեն գցած բաները հավաքել ու պահել են ձեզ համար։ Ուղարկեցեք, թող բերեն։

—Կուղարկեմ, Սենդի։ Բայց կարծեմ, վոր դուք ակնարկեցիք, վոր մարդիկ յերբեմն հույս ունեն այստեղ վորևե բան ստանալու և հիասթափվում են։

—Ո՛, այստեղ շատ բաներ կան, վորոնց մարդիկ փափագում են և չեն ստանում։ Որինակ՝ Բրուկլինում՝ մի քարոզիչ կա Թոմմեջ անունով, վորը պատրաստում է իրեն համար մի բավական խոշոր հիասթափություն։ Նա իր քարոզներում միշտ ասում է, վոր հենց վոր ինքն ընկնի յերկինք, ամենից առաջ նա իր գիրկը կառնի, Աբրահամին, Իսահակին և Հակոբին, կհամբուրի նրանց և արտասուքով կվողողի նրանց։ Միլիոնավոր մարդիկ յերկրի վրա յերազում են միևնույն բանն անել յերկնքում։ Ամեն որ գալիս են այստեղ վաթսուն հազար մարդ, վորոնք ցանկանում են իրենց ուղղակի գցել Աբրահամի, Իսահակի և Հակոբի վրա, կախ ընկնել նրանցից ու վողողել նրանց արցունքներով։ Ցերևակայեցեք, վաթսուն հազար մարդ որական—բավական ծանր խնդիր է այդ ծերունիների համար։ Ուրեմն կանգնիր սյունի պես տարիներ շարունակ ու թույլ տուր, վոր կախ ընկնեն քեզանից և քեզ վողողեն արցունքներով՝ որական յերեսուներկու ժամ։ Նրանք ուժից կընկնեին և միշտ թաց կլինեին ջրի առնետների պես։ Ի՞նչ պիտի դառնար յերկինքը նրանց համար։ Մի այնպիսի փառավոր վայր, վորից կուզեիր փախչել՝ վորքան ուժ կա վոտքերումդ—դուք ինքներդ հասկանում եք։ Այդ ծերուկները բարի և համակրելի մարդիկ են, բայց նրանք ձեզանից ավելի շատ չեն սիրում Բրուկլինի հուզված սուտ ճգնավորների համբույրները։ Հիշեցեք իմ խոսքը, մի՞սար Թոմմեջի փորձերը շնորհակալությամբ կմերժվեն։ Ընտրյալներին արվող զիջողություններն իրենց սահմանն ունեն, նույնիսկ յերկնքում։ Ցեթե Ադամը ներկայանա ամեն մի նորեկի, վորը ցանկանում է նրան այցելել, նայել նրան և խնդրել նրա անձնական մակագրությունն իր քարտի վրա, նա այլևս մի ազատ րոպե չի ունենա իր գործն անելու համար։ Իսկ Թոմմեջը սպառնում է իր ուշադրությանն արժանացնել նաև Ադամին, ինչպես և մյուս մարգարեներին և հին ծերունիներին։ Դե նա սխալվում է այդ խնդրի նկատմամբ։

—Իսկ դուք կարծում եք՝ Թոմմեջն իսկապե՞ս կընկնի յերկինք։

—Դե ի հարկե կընկնի։ Բայց դուք մի անհանգստանաք։ Նա կընկնի իր հոտի մեջ, այստեղ ամեն տեսակի յերկինք կա—այդ բանը չեր կարող լինել, յեթե տերտերներն ու քարոզիչները կարողանային սար-

քել յերկինքն իրենց ուղածի պես։ Ամեն մեկն այստեղ գտնում է այն, ինչ իրեն դուր է գալիս, և յեթե նա չի անհանգստացնում մյուսներին, ապա նրան թողնում են հանդիստ։ Յերկինքը շինված է բավական լավ և առատաձեռն ծրագրով։

Սենդին ուղարկեց, վոր յուր իրերը բերեն, յես ելուզարկեցի իմ իրերի հետևից, և յերեկոյան ժամը իններին մենք սկսեցինք զգեստավորվել։

Սենդին ասաց,

—Դուք, Ստորմի, կարծում եմ, մեծ բախտ կունենաք։ Կարող է պատահել, վոր մի քանի պատրիարքներ յերևան։

—Մի՞թե կերևան։

—Գուցե։ Ի հարկե իրրև բացառություն։ Նրանք գրեթե յերբեք չեն յերևում հասարակ մարդկանց, միայն յերբեմն—ճշմարիտ հավատն ընդունողներին հանդիպելիս։ Նրանք այդ բանն ել չեյին անի, յեթե յերկրի վրա հավատացած չլինեյին, վոր այդ դեպքերում յերկնքում անպայման մեծ հանդես են սարքում։

—Նրանք բոլորը կերևան, Սենդի։

—Ո՞վ, բոլոր պատրիարքնե՞րը։ Ո՛չ, վոչ։ Ամենաշատը — յերկուսը։ Դուք պետք է ապրեք այստեղ հիսուն հազար տարի, —գուցե և ավելի, — վորպեսզի հարեվանցիորեն տեսնեք պատրիարքներին և մարգարեներին։ Այն որվանից, վոր յես այստեղ ապրում եմ, յես միայն մի անգամ եմ մոտիկից տեսել Հոբին և մի անգամ Քամին ու Յերեմիային—յերկուսին միասին։ Բայց մի յերևելի դեպք պատահեց իմ ներկայությամբ՝ մոտ յերկու տարի առաջ։ Հանդիպմանն արժանացավ



մի անգլիացի—Չարլզ Պիյսը—մարդասպանը։ Զորս պատրիարք և յերկու մարգարե նստած եյին գլխավոր ամբիոնի վրա։ Այդպիսի հանդիպում չեր յեղել նավապետ Կիդդի[1]) ժամանակվանից։ Աբելը հազար յերկու հարյուր տարվա ընթացքում առաջին անգամն եր լինում այստեղ։ Լուր տարածվեց, վոր սպասում են Ադամին։ Դե ի հարկե Աբելն ել հերիք եր, վորպեսզի գրավեր ամբոխին, բայց վոչվոք այնքան հրապուրիչ չեր, ինչպես Ադամը։ Լուրը սուտ լուր եր, բայց, ասում եմ, տարածվեց ամեն տեղ, և յերկար ժամանակ չեմ տեսնի յես նորից այդպիսի պատկեր։ Հանդիպումը կատարվեց, հասկանալի յե, անգլիական շրջանում, ուր հարյուր տասնմեկ միլիոն մզոն այստեղից հեռու։ Յես ուղևորվեցի այնտեղ իմ հարևաններից շատերի հետ, և արժեր տեսնել այդ բոլորը, յես ձեզ ասեմ։ Այստեղ կային միլիոնավոր մարդիկ։ Յերբ նրանք յերգում եյին, չտեսնված աղմուկ եր բարձրանում։ Իսկ յերբ ձայները լռում եյին, միայն հենց թևերը խփելու աղմուկից գլուխդ տրաքում եր, վորովհետև ամբողջ յերկնքից ձյունի պես խիտ թափվում եյին հրեշտակները։ Չնայած Ադամը չերևաց, համենայն դեպս զարմանալի հետաքրքիր եր, վորովհետև մենք ամբիոնի վրա յեռաքրքիր եր, վորովհետև մենք ամբիոնի վրա յերբեք հրեշտակապետ տեսանք, իսկ այդ հազվագյուտ բան է, յերբ մեկին նույնիսկ հաջողվում է տեսնել։

---

[1]) Նավապետ Ուլյամ Կիդդ (1650—1701), հռչակավոր ծովային ավազակ, վորին կախեցին Լոնդոնում։

— Ո՞ւմն են նման նրանք, Սենդի։

— Դե նրանց յերեսները փայլում են, քղամիղները փայլուն և թևերը զարմանալի բազմերանգ։ Նրանք հսկա հասակ ունեն, մոտ 18 վոտնաչափ, կողքից թուր ունեն կախած, և գլուխները հպարտորեն ցցված են վեր նման են զինվորների։

— Իսկ լուսապսակ ունե՞ն նրանք։

— Վո՛չ,—համենայն դեպս ողակապի նման չի։ Հրեշտակապետներն ու պատրիարքներն իրենց գլխին մի քիչ ավելի լավ բաներ ունեն։ Այնպես մի կլոր, մեծադիր, շքեղ վոսկյա պսակ, վորը շատ-ուցիչ փայլ ունի։ Յերկրի վրա դուք հաճախ տեսել եք նկարի վրա պատրիարքներին մի ինչ-վոր այդպիսի բան գլխներին,—հիշո՞ւմ եք,—թվում եր, թե պղնձյա կոնք են դրել գլխներին։ Բայց այստեղ մի քիչ ուրիշ ձևի յե—այստեղ պսակն անհամեմատ ավելի փայլուն է և գեղեցիկ։

— Դուք խոսե՞լ եք այդ հրեշտակների և պատրիարքների հետ, Սենդի։

— Ո՞վ, յե՞ս։ Ի՞նչ տարորինակ մարդ ես, Ստորմի։ Յես արժանի չեմ խոսելու այդպիսի անձնավորություններ հետ։

— Իսկ Թոմմի՞ը։

— Ի հարկե վո՛չ։ Դուք նույնպես սխալվում եք այդ բանում, ինչպես բոլորը յերկրի վրա։ Յես էլ այդպես եյի մտածում, բայց յես դրան վերջ տվի։ Այնտեղ՝ ներքևում խոսում են յերկնային արքայի մասին,—և այդ ճիշտ է,— իսկ հետո դատում են յերկնքի մասին, կարծես այդ մի հանրապետություն է, վորտեղ բոլորը հավասար են, վորտեղ ումն ուզես՝ կարող ես գրկել ու համբուրել, և վորտեղ ամեն մեկը մտերիմ է և ընկերական բոլոր ընտրյալների հետ, սկսած ամենաբարձրներից մինչև ամենացածրները։ Ի՞նչպիսի խառնաշփոթություն և անմտություն։ Ախր ել ի՞նչ հանրապետություն, յերբ այստեղ արքա կա։ Ել ի՞նչ հանրապետություն է այդ, քանի վոր պետության ղեկավարն ինքնակալ է, հավիտյան պահում է իր տեղը, և քանի վոր վոչ պարլամենտ կա, վոչ ել խորհուրդ, վոր խառնվեն նրա գործերին, վոչ քվեարկություն կա, վոչ ընտրություն, վոչվոքի ամբողջ տիեզերքում իրավունք չի տրվում խառնվելու կառավարության գործերին, վոչ ել մեկն ու մեկին ձայնի իրավունք են տալիս այդտեղ, վոչվոքի չեն խնդրում պատմությանն ոգնելու։ Հիանալի հանրապետություն է, այդպես չի՞։

— Հա, ասենք, այդ մի քիչ ուրիշ տեսակ է, քան յես կարծում եյի։ Բայց յես կարծում եյի, վոր կարող եմ վորոշ տեղերում լինել, մեծավորների հետ ծանոթանալ։ Վոչ թե իմ բարեկամությունը փաթաթեմ նրանց վզին, գիտեք, այլ միայն սեղմեմ նրանց ձեռքը և հետները մի քիչ խոսեմ։

— Իսկ կարո՞ղ են, վերցնենք հենց, ռուս հասարակ տղաները մտնել Ռուսաստանի ցարական մինիստրների մոտ և այդ անել։ Ասենք, հենց, որինակի համար, զրուցել իշխան Գարչակովի հետ։

— Չեմ կարծում, Սենդի։

— Բա՞ս, այստեղ ավելի խիստ է։ Այստեղ, այդ

տեսակետից, հանրապետության սովերն անգամ չկա։ Այստեղ աստիճանավորների իշխանություն է։ Այստեղ փոխարքաներ են, իշխաններ, նահանգապետներ, փոխ-նահանգապետներ, հատուկ հանձնարարությունների պաշտոնյաներ և հարյուրավոր ուրիշ պաշտոնյաներ, ազնվականների կարգեր, սկսած բարձրագույն հրեշտակապետներից, աստիճան աստիճանի հետևից, մինչև ընդհանուր մակերևույթը, որտեղ չկա վոչ մի տիտղոս։ Դուք գիտեք, թե ինչ է նշանակում զտարյուն իշխանազն՝ յերկրի վրա։

— Վոչ։

— Դե զտարյուն իշխանազնը չի պատկանում բուն իմաստով թագավորող տոհմին և չի պատկանում հասարակ ազնվականների դասին։ Նրանք ցածր են թագավորական գծից և բարձր են ազնվականներից։ Հենց այդպիսի դրություն է այստեղ պատրիարքների և մարգարեների նկատմամբ։ Այստեղ կան բարձրագույն մեծավորներ, որոնց հողաթափները նույնիսկ մենք արժանի չենք մաքրելու, իսկ նրանք արժանի չեն մաքրելու պատրիարքների և մարգարեների հողաթափները։ Այդ վորևե հասկացողություն տալիս է ձեզ այստեղի աստիճանավորների մասին։ Հասկանում եք, թե ինչքան բարձր են կանգնած այստեղ մարգարեներն ու պատրիարքները։ Մի բոպե նրանցից մեկն ու մեկին նայել - այդ այնպիսի հազվագյուտ բան է, վոր մարդիկ հիշում և պատմում են այդ մասին հազար տարի։ Մտածեցեք մեկ, Նավապետ—յեթե Աբրահամը հայտնվի այստեղ, այս դռների մոտ, սրանց շուրջը պետք է ցանկապատել և վրան ծածկ շինել, և մարդիկ կթափվեն այստեղ խմբերով բոլոր յերկինքներից և հսկայական ճանապարհ կանցնեն, վորպեսզի այդ տեսնեն։ Աբրահամը մեկն է նրանցից, վորոնց Բրուկլինցի մխիթարը Թոմեջը պատրաստվում է գրկելու, համբուրելու և արցունքներով վողողելու։ Նա, գիտեք, ստիպված պիտի լինի արտասուքի մեծ պաշար վերցնել իր հետ, թե չե նրա արտասուքը կչորանա, նախ քան նրան կհաջողվի տեսնել Աբրահամին։

— Սենդի,—ասացի յես,—քիչ-միչ կարծում եյի, վոր յես այստեղ բոլորի հետ հավասար կլինեմ, ճիշտ է այդ, բայց յես այժմ դեն եմ զցում այդ միտքը։ Այդ կարևոր չի, և յես, համենայն դեպս, բավական բախտավոր եմ։

— Նավապետ, դուք ավելի բախտավոր եք, քան կարծում եք, միայն ուրիշ իմաստով։ Այդ հին պատրիարքներն ու մարգարեներն ամբողջ դարերով ձեզնից առաջ են անցել։ Նրանք յերկու բոպեյում ավելի շատ են ըմբռնում քան դուք մի տարում։ Փորձել եք դուք, ծովագնաց և նավապետ, յերբևիցե լուրջ դատել քամիների ուղղության, ծովային հոսանքների և կողմնացույցի թեքումների մասին կապալառուի հետ։

— Ցես սկսում եմ հասկանալ ձեր միտքը, Սենդի։ Կապալառուն ինձ համար հետաքրքիր չեր լինի։ Նա տգետ է այդպիսի բաներում, և յես կձանձրանայի նրա հետ, նա ել՝ ինձ հետ։

— Ճիշտ է։ Ձեր խոսակցությունը ձանձրալի կլիներ պատրիարքներին, իսկ յերբ նրանք ըսկսեին խոսել, ուրեմն պիտի կրակեյին ձեր գլխի վրայով։ Վերջ ի վերջո դուք կասեյիք՝ «վողջմնաք,

ձերդ պայծառություն, յես մի ուրիշ անգամ կը-
հանդիպեմ»,—և չեյլիք հանդիպի։ Յերբևիցե խնդ-
բել եք դուք ձեր հավաքարարին՝ շնորհ բերի ձեր
նավասենյակը և ճաշի ձեզ հետ։

— Դե հասկանում եմ, հասկանում եմ, Սենդի։ Յես
սովոր չեմ այդպիսի բարձր անձնավորություն-
ների, ինչպես պատրիարքներն ու մարգարեներն են
յես կընկճվեյի և կհամբանայի նրանց ներկայու-
թյամբ և մի անասելի ցանկություն կզգայի՝ ինչ-
քան կարելի յե շուտ ծլկվել։ Սենդի. իսկ ո՞վ է
բարձր իր պաշտոնով—պատրիարքնե՞ը, թե մար-
գարեները։

— Ո՞, մարգարեները գերազանցում են պատ-
րիարքներին։ Նույնիսկ բոլորովին նոր մարգարեն
ավելի նշանավոր է համարվում, քան ամենահին
պատրիարքը։ Այո՛, սը՛ր, ինքն Ադամը գնում է
Շեքսպիրի յետևից։

— Իսկ մի՞թե Շեքսպիրը մարգարե յե։

— Ի հարկե։ Այդպես նաև Հոմերոսը և շատ
ուրիշները։ Բայց Շեքսպիրն ու մյուս բանաս-
տեղծները ավելի ցածր են քան տեննեսցի մի
դերձակ՝ Բիլլինգս ազգանունով, և յետ է մնում
Ավղանստանցի Սակկա անունով մի անասնաբու-
ժից։ Յերեմիան, Բիլլինգսը և Բուդդան ընթանում
են միասին, կողք—կողքի, անմիջապես վոչ մեր
սիստեմի մոլորակների մի խումբ մարգարեներից
հետո։ Նրանցից հետո գալիս են մեկ-յերկու տաս-
նյակ մարգարեներ—Յուպիտերից և ուրիշ աշ-
խարհներից։ Հետո գալիս են Դանիելը, Սակկան և



Կոնֆուցիոսը[1])։ Հետո մի մեծ խումբ մյուս սիս-
տեմներից։ Հետո Մահմեդը[2]), Զրադաշտը[3]) և մի
սրող հին Յեգիպտոսից։ Հետո գալիս է մարգա-
րեների ելի մի յերկար շարք և նրանցից հետո—
Շեքսպիրը, Հոմերոսը և կոշկակար Մարեն հեռա-
վոր ֆրանսիական գաղութից։

— Իսկ այստեղ իսկապե՞ս հոչակվում են Մահ-
մեդն ու մյուս հեթանոսները։

— Այո։ Նրանք բոլորն ել ունեցել են իրենց
անելիքը յերկրի վրա և նրանք ստացան իրենց
վարձը։ Այն մարդը, որը հաջողություն չի ունե-
ցել յերկրի վրա, կարող է չանհանգստանալ—նա
իր վարձատրությունը կստանա այստեղ, անպայ-
մանորեն։

— Իսկ ինչո՞ւ Շեքսպիրը յետ է մղված և բա-
վական ցածր է դրված կոշկակարից, անասնաբու-
ժից և սրողից, որոնց մասին վոչվոք չի լսել։

— Դե արդարությունն է այդպես պահանջում.
նրանք չեյին վարձատրված ըստ իրենց արժեք-
ների՝ յերկրի վրա, իսկ այստեղ իրենց արժանի
տեղը բռնեցին։ Տեննեսցի դերձակ Բիլլինգսը վո-
տանավորներ եր գրում, որոնց չեյին կարող հա-
վասարվել Հոմերոսն ու Շեքսպիրը։ Բայց վոչվոք
չեր տպում այդ վոտանավորները և վոչվոք չեր
կարդում, բացի տգետ հարևաններից, որոնք ծի-
ծաղում եյին դրանց վրա։ Յերբ գյուղում հար-

[1]) Կոնֆուցիոս—հին չինական փիլիսոփա։

[2]) Մահմեդ (570—632)—մուսուլմանների (մահմեդական-
ների) կողմից համարվում է աստծու—ալլահի մարգարեն։

[3]) Զրադաշտ—հին պարսկական կրոնի հեքիաթային մար-
գարե։

բած մարդիկ քեֆ եյին անում ու պարում, նրան քաշ եյին տալիս խնճույքի, գլխին կաղամբի տերևներից պսակ եյին դնում և ծաղրելով ճանապարհում եյին, իբր թե ծուռը են իջեցնում նրան։ Մի անգամ գիշերը, յերբ նա հիվանդ եր և գրեթե մեռնում եր քաղցից, նրանք դուրս հանեցին, ծաղրական պսակը գլխին դրին և քաշ տվին գյուղի միջով, իսկ նրա յետևից անընդհատ դրմփդրմփացնում եյին թիթեղե ամանները և վայրենի կերպով բղավում։ Դե նա չապրեց մինչև առավոտ։ Յեվ նա բոլորովին հույս չուներ յերկինք ընկնելու, ել ավելի քիչ հույս ուներ, վոր նրա պատճառով այստեղ այսպիսի իրարանցում կբարձրանա։ Դրա համար ել, կարծում եմ, նա սաստիկ զարմացած եր այն հանդիսավոր ընդունելությունից, վոր նրան ցույց տվին յերկնքում։

— Դուք այստեղ եյիք, Սենդի։

— Ի՞նչ եք ասում։ Վո՛չ։

— Ինչո՞ւ։ Միթե դուք չգիտեյի՞ք, թե հանդիպում ե լինելու։

— Պարզ ե, վոր գիտեյի։ Յերկնքում այդ մասին խոսում եյին վոչ թե մի որ, ինչպես այն պանդոկատիրոջ մասին, այլ դեռ քսան տարի դերձակի մահից առաջ։

— Դե, վոր այդպես ե—ել ինչո՞ւ դուք չզընացիք։

— Ինչի՞ մասին եք դուք խոսում։ Ինձ պես մի մարդ մանակցի մարգարեյի հանդիսավոր հանդիպմանը։ Ինձ նման մի չնչին անձնավորություն դուրս գար հանդիպելու այդպիսի մի բարձրը անձնավորությանն, ինչպես Եդուարդ Բիլլինգսն ե։ Բիլիոն մղոնի վրա ինձ ծաղրի կենթարկեյին։

— Իսկ ովքե՞ր եյին դիմավորում։

— Մի քանի մեծ մարդիկ, վորոնց ինձ և քեզ յերբեք չի հաջողվի տեսնել, նավապետ։ Վոչ մի սովորական քաղաքացի, ասեմ ձեզ, չի արժանացել յերբևիցե վորևե մարգարեյի դիմավորելու բախտին։ Այդտեղ եյին բարձրագույն աստիճանավորները, բոլոր պատրիարքներն ու մարգարեները—առաջինից մինչև վերջինը, և՛ բոլոր հրեշտակապետները, և՛ բոլոր իշխանները, նահանգապետները, փոխ—նահանգապետները, իսկ մանր-մունր մարդկանցից—վո՛չ մեկը, ասում եմ։ Յեվ նկատի ունեցեք, յես խոսում եմ վոչ միայն մեր աշխարհի մեծավորների մասին,—այդտեղ կային իշխաններ, պատրիարքներ և ուրիշ մեծ մարդիկ բոլոր աշխարհներից, վորոնք փայլում են մեր յերկնքում, և բացի այդ, բիլիոնավոր ուրիշ աշխարհներից, վորոնք պատկանում են մեր արևից անսահման հեռու գտնվող սիստեմներին։ Այնտեղ կային այնպիսի մարգարեներ և պատրիարքներ, վորոնց հետ մեր յերկրայինները վոչ մի դեպքում չեյին կարող համեմատվել իրենց դերով ու հռչակով։ Կային մարգարեներ Յուպիտերից և մեր արևի սիստեմի մյուս մոլորակներից, բայց ամենահռչակավոր բանաստեղծները, յերեքը—Օսոն, Բոն և Սուֆը—այն հսկայական մոլորակներից եյին, վորոնք պատկանում են յերեք տարբեր և չափազանց հեռավոր սիստեմների։ Այդ յերեք անուններն ծանոթ են հազարավոր յերկնային տարածությունների ամեն մի անկյունում, փայլում են տիեզերքի մի ծայրից մինչև մյուսը և

հռչակավոր են վորպես ութսուն գերազույն հրեշ-
տակապետները։ Իսկ մեր Մովսեսի, Ադամի և նը-
րանց նմանների մասին գիտեն միայն յերկնքի
մի փոքրիկ անկյունում։ Դե գիտեն նրանց նաև
մի քանի շատ գիտուն մարդիկ, վորոնք ցրված
են այս ու այն կողմ, բայց դե նրանք ել միշտ
սուտ ու սխալ անուններ են տալիս նրանց, շփո-
թում են մի մարգարեյի աշխատությունները
մյուս մարգարեյի աշխատությունների հետ, նը-
րանց ապրելու վայրը համարում են մեր արեգա-
կի սիստեմը և կարծում են, վոր կարիք չկա փոր-
փրելու, վոր իմանան, թե վոր մոլորակի վրա
եյին նրանք ապրում։ Դա, վոնց վոր այն գիտուն
հնդիկը, վորը պարծենալով իր գիտությամբ, ա-
սում է, վոր, Լոնգֆելլոն[1]) ապրում է Միացյալ
Նահանգներում, կարծես թե նա ապրում է բոլոր
Միացյալ Նահանգներում և կարծես այդ յերկիրն
այնքան փոքր է, վոր անհնար է նեռել աղյուսն
այնպես, վոր չդիպչի նրան։ Մեր մեջ ասած՝ ինձ
վրդովեցնում է այդ հրեշավոր աշխարհների մարդ-
կանց անտարբեր և սառրացուցիչ վերաբերմունքը
դեպի մեր փոքրիկ աշխարհը և նույնիսկ դեպի
մեր արեգակնային սիստեմը։ Ի հարկե մենք լավ
գիտենք Յուպիտերի մեծությունը, վորի հետ հա-
մեմատած՝ մեր աշխարհը մի կարտոֆիլի չափ է։
Բայց դե այնտեղ—մյուս սիստեմներում—կան
այնպիսի աշխարհներ, վորոնց հանդեպ Յուպիտերը
մանանեխի հատիկից ել փոքր է։ Հուբբի մոլորակն,
որինակ։ Հուբբից յեկած տուրիստները (յես

[1]) Լոնգֆելլո Հենրի (1708—1822)—հայտնի ամերիկական բանաստեղծ։



ինկատի ունեմ նրանց, վորոնք ապրել և մեռել են
այնտեղ, տեղացիներին) գալիս են յերբեմն այս-
տեղ և հարց ու փորձ են անում մեզ մեր աշխար-
հի մասին, և յերբ նրանք հայտնաբերում են, վոր
նրա փոքրությանն հետևանքով կայծակը պտտվում
է նրա շուրջն ութ վայրկյանում, նրանք հեն-
վում են վորևե բանի և ծիծաղում են։ Հետո նը-
րանք դնում են ապակու կտորն աչքներին և ը-
կսում են դիտել մեզ, կարծես թե մենք ռտա-
բերկրյա փայտոջիլի մի տեսակն ենք կամ դրա
նման մի բան։ Նրանցից մեկը հարցրեց ինձ, թե
վորքան է մեր ցերեկվա տևողությունը։ Յեվ
յերբ յես նրան ասացի, վոր միջին հաշվով տաս-
ներկու ժամ է, նա հետաքրքրվեց իմանալու, թե
արդյոք այդչափ որը բավական է համարում այդ
ժողովուրդը, վորին յես եմ պատկանում, վեր կե-
նալու և լվացվելու համար։ Այդպիսի սովորու-
թյուն ունեն Հուբբից յեկած մարդիկ։ Նրանք,
թվում է, վոչ մի առիթ բաց չեն թողնի, վոր ձեր
յերեսովը տան, թե իրանց մոտ ցերեկը մեր յե-
ռեքհարյուր քսան յերկու տարուն է հավասար։
Այդ յերիտասարդ պճնամոլը, վորը դեռ նոր եր
մտնում իսկական տարիքի մեջ—նա վեց թե յոթ
հազար որական եր՝ իրենց որերով, այսինքն յեր-
կու միլիոն տարեկան, մեր տարիներով, և նրա
տեսքը կատարյալ լակոտի տեսք եր, հենց իր տա-
ռիքին համապատասխան, այսինքն այն դարձա-
ռիքին համապատասխան, յերբ մարդս դադարում է տղա լի-
նելուց, բայց և դեռ չափահաս չի դարձել։ Յեթե
յես լինեյի մի ուրիշ վայրում, և վոչ յերկնքում,
յես նրան մի անկեղծ խոսք կասեյի։ Լավ, այդ-

պես։ Բիլլինգսի համար մի շատ խոշոր հանդիպում սարքեցին, վոր չեր տեսնված հազարավոր դարերի ընթացքում, և այդ հանդիպումը, կարծում եմ, շատ էֆեկտավոր յեղավ։ Նրա անունը կտարածվի տիեզերքի հեռավոր վայրերում, և մեր արևի սիստեմի մասին կսկսեն խոսել, գուցե կխոսեն նաև մեր յերկրի մասին, և մենք մի փոքր կբարձրանանք յերկնային հասարակության աչքում։ Հապա մեկ մտածեցեք, Շեքսպիրը գնում եր Տեննեսցի դերձակի հետևից և նրա վոտքերի տակ ծաղիկներ եր գցում, իսկ Հոմերոսը կանգնել եր նրա բազկաթոռի հետևը և խնճույքի ժամանակ սպասարկում եր նրան։ Ի հարկե այդ այնքան մեծ արժեք չունի այստեղ, ուրիշ սիստեմների այն հսկա ոտարերկրացիների շրջանում, վորովհետև նրանք վոչինչ չեն լսել վոչ Շեքսպիրի, վոչ Հոմերոսի մասին, բայց մի փոքրիկ յերկրի համար շատ նշանակալի կլիներ, յեթե այնտեղ իմանային այդ մասին։ Ափսոս, վոր վոչինչ դուրս չի գալիս այդ խղճուկ սպերիտիզմից[1]), թե չե մենք այնտեղ մի տեղեկություն կուղարկեյինք։ Այդ գյուղակը Տեննեսում արձան կկանգնեցներ Բիլլինգսին, և նրա ավտոգրաֆը[2]) սատանի ստորագրությունից թանկ կգնահատվեր։ Այսպես ուրեմն, նշանավոր բոպեներ են յեղել այդ հանդիպմանը—խոբոկենցի մի մանր աղնվական պատմեց լինձ այդ մասին—սրբ Ռիչարդ Դաֆերը—բարոնետը։

[1]) Սպերիտիզմ—վոգետեսություն, վոգեհարցություն։

[2]) Ավտոգրաֆ— ստորագրություն կամ մակագրություն՝ իր ձեռքով։ Հռչակավոր մարդկանց ավտոգրաֆների համար սիրողները յերբեմն խոշոր գումար են վճարում։



—Ի՞նչ եք ասում, Սենդի, խոբոկենցի ազնվականն։ Ի՞նչպես յեղավ այդ։

—Շատ պարզ։ Դաֆերը յերշիկի խանութ եր պահում և վոչ մի ցենտ[1]) յետ չգցեց իր ամբողջ կյանքի ընթացքում, վորովհետև նա սովորություն ուներ ամբողջ ավելորդ մխան աղքատներին բաժանելու։ Վոչ թե թափառաշրջիկներին—վոչ—ուրիշ տեսակի մարդկանց,—նրանց, վորոնք ավելի շուտ կմեռնեն սովածությունից, քան վոդորմություն կխնդրեն—ազնիվ գործազուրկներին։ Դիկ Դաֆերը հետապնդում եր այն տղամարդկանց, կանանց և յերեխաներին, վորոնց արտաքինից յերևում եր, վոր նրանք սոված են, գնում եր նրանց յետևից մինչև նրանց տուն, հարևաններից հարցնում եր նրանց մասին և հետո կերակրում եր նրանց ու նրանց համար աշխատանք եր գտնում։ Վորովհետև վոչ մեկը յերբեք չեր տեսել, վոր նա վորևե մեկին մի բան տա, ուստի և բոլորը նրան համարում եյին վատ մարդ։ Այդպես ել նա մեռավ, և նրա մասին ասում եյին, «Լավ ելավ, վոր մաքրվեց»։ Բայց հենց այն րոպեյին, յերբ նա յերևաց այստեղ, նրան բարոնետ դարձրին, և առաջին խոսքերը, վոր լսեց խոբոկենցի յերշիկագործ Դիկը, յերբ նա վոտք դրեց յերկնային ափը, դրանք եյին. «Բարով յեկաք, ս՛ըր Ռիչարդ Դաֆեր»։ Նա մի քիչ զարմացավ, վորովհետև վախենում եր, վոր իրեն կուղարկեն այստեղից ավելի տաք կլիմա ունեցող տեղ։

Հանկարծ ամբողջ շրջանը դղրդաց հազար

[1]) Ցենտ—մանր դրամ Ամերիկայում, մոտ յերկու կոպեկ։

հարյուր մեկ վորոտալից պայթյուններից, և Սենդին ասաց.

— Ահը՛, պանդոկատիրոջ պատվին է այդ։ Յես վեր թռա ու բացականչեցի.

— Դե շուտ գնանք, Սենդի։ Այդ հանդեսից, գիտեք, վորևե բան չպետք է բաց թողնել։

— Նստեցեք, — ասաց նա, — պանդոկատիրոջ մասին դեռ հեռագրում են միայն։

— Վո՞նց թե։

— Այդ վորոտալից համազարկը նշանակում է միայն, վոր նրան նկատել են դիտակայանից։ Նա մեկնել է Սենդիուկ հրվանդանից։ Պատվիրակությունները կթռչեն նրա հանդեպ և կուղեկցեն նրան։ Կլինեն ամեն տեսակի արարողություններ և հապաղումներ։ Մինչև նրանք հասնեն այստեղ, բավական ժամանակ կանցնի։ Ինչքան չլինի՝ մի քանի բիլիոն մղոն է այնտեղից։

— Յես էլ կարող եյի պանդոկապետ լինել, — ասացի յես՝ հիշելով, թե ինչպես յես միայնակ եյի այստեղ գալիս և ինչպես չկային վոչ պատվիրակություններ, վոչ էլ վորև է նման բան։

— Ձեր ձայնի մեջ մի փոքր ափսոսանք եմ նկատում, — վրա բերեց Սենդին, — և այդ բավական հասկանալի յե։ Բայց թող հինը մոռացվի։ Դուք յեկել եք այստեղ ձեր կյանքի համաձայն, և շատ ուշ է ուղղել այդ։

— Ե՛հ, այդպես լինի, Սենդի, բան չեմ ասում։ Բայց ձեզ մոտ էլ այստեղ Սենդի Խուկ անունով հրվանդան կա, ճի՞շտ է։

— Մեզ մոտ կա այն ամենը, ինչ վոր այնտեղ ներքևում կա։ Ամերիկայի բոլոր նահանգներն ու շրջանները և աշխարհի բոլոր յերկրները, ծովերի բոլոր կղզիները դասավորված են այստեղ հենց այնպես, ինչպես յերկրագնդի վրա։ Միայն ամեն մի նահանգ, ամեն մի յերկիր և ամեն մի կղզի այստեղ բիլիոն անգամ մեծ է, քան յերկրի վրա։ Ա՛յ, ահա մի նոր վորոտընդոստ պայթյուն։

— Իսկ այդ ինչի համար է։

— Այդ՝ մյուս ամրոցը պատասխանում է առաջինին։ Ամեն մեկը բաց է թողնում հազար հարյուր մեկ վորոտալից հարված՝ մի անընդմեջ պայթյունով — այդպես են սովորաբար վողջունում ճշմարիտ հավատացյալների՝ տասնմեկերորդ ժամվա աղանդից յեկած հյուրին։ Ամեն մեկին հարյուր և հետո մեկ լրացուցիչ հարված՝ յեկողի սեռը նշելու համար։

Կինը մենք նրանից ենք իմանում, յերբ այդ լրացուցիչ հարվածը չկա։

— Իսկ ինչպես ենք իմանում, Սենդի, վոր այդ ուղիղ հազար հարյուր մեկ հարված է, յեթե բոլորն էլ մեկտեղ է լինում։ Յեվ չնայած դրան՝ մենք համոզված կերպով իմանում ենք։

— Մեր ընդունակություններն այստեղ շատ են սրվել մի քանի տեսակետներից։ Յեվ այդ ահա նոր ընդունակություններից մեկն է։ Թվերը, մեծությունները ու տարածությունները այնքան վիթխարի յեն, վոր մենք ընդունակություն ենք ձեռք բերել դրանք զգալու. — հաշվելու, չափելու և թվանշաններով արտահայտելու մեր հին ձևը չեր կարող ընդգրկել այն, այլ կշփոթեցներ մեզ, կհոգնեցներ ու գլխացավ կառաջացներ։

Մենք մի քիչ էլ շաղակրատեցինք այդ մասին, հետո յես հարցրի.

— Սենդի, յես այստեղ գրեթե չեմ տեսնում

սպիտակ հրեշտակներ։ Մի սպիտակին ընկնում է հարյուր միլիոն պղնձամորթ հրեշտակ, և վոչ մեկն անգլերեն չի խոսում։ Ի՞նչպես յեղավ այդ։

— Դե դուք կտեսնեք այդ նույն բանը յերկնային Ամերիկայի ամեն մի նահանգում, վորտեղ վոր դուք ցանկացաք ապրել։ Ցես մի ամբողջ շաբաթ սլանում եյի նրա միջով, անցա միլիոն միլիոն մղոններ և տեսա անթիվ անհամար հրեշտակների խմբեր, և չտեսա վոչ մի սպիտակ, և չլսեցի վոչ մի հասկանալի բառ։ Ամերիկան, հասկանում եք, բիլիոնավոր տարիներ և ավելի բնակված եր հնդիկներով, ացտեկներով և զանազան այդ տեսակի ժողովուրդներով, սպիտակ մարդիկ այնտեղ հայտնվելուց առաջ։ Կոլումբոսից հետո յերեք դար շարունակ Ամերիկայում շատ քիչ սպիտակներ կային, բոլորին միասին կարելի յեր տեղավորել ընթերցարանի մի լավ դահլիճի մեջ։ Տասնիններորդ դարի սկզբին այնտեղ կար ընդամենը վեց թե յոթ միլիոն, լավ՝ ասենք հենց յոթ միլիոն հոգի։ 1825 թվին կար տասներկու կամ տասնչորս միլիոն։ 1850 թվին, ասենք, 23 միլիոն։ 1875 թվին—40 միլիոն։ Մեռնում եյին մեզ մոտ տարեկան, միջին թվով, մոտ 20 մարդ ամեն մեկ հազարին։ Ուրեմն տասնիններորդ դարի առաջին տարին մեռել է 140 հազար մարդ։ 25 թվին —յերկու հարյուր ութսուն հազար։ Յոթանասունհինգ թվին—մոտ մեկ միլիոն։ Լավ, յես ավելի առատաձեռն կլինեմ այդ խնդրի նկատմամբ և կընդունեմ, վոր սկզբից մինչև այսոր Ամերիկայում մեռել է հիսուն միլիոն սպիտակ։ Ուզում եք՝ վաթսուն։ Թող նույն իսկ հարյուր



միլիոն լինի—մի քանի միլիոնն առանձին տարբերություն չի անում։ Դե հիմա դուք ինքներդ տեսնում եք, վոր յեթե շաղ տանք այդպիսի մի բուռը մարդկանց ամերիկական տարածությունների հարյուր բիլիոնավոր մղոնների վրա այստեղ յերկնքում, ապա այդ միևնույն է, թե շաղ տաս մի տասցենտանոց տուփ հոմեոպաթիկ դեղհատ ամբողջ Մեծ Սահարայով մեկ և փորձես այն նորից հավաքել։ Չկարծեք, թե մենք յերկնքում մի բան ենք ներկայացնում։ Մենք վոչինչ չենք ներկայացնում։ Այդ մի պարզ փաստ է, և ամենից լավն այն է, վոր հաշտվենք դրա հետ։ Յերբ ուրիշ մոլորակների և ուրիշ սիստեմների գիտնականները, ճանապարհորդելով յերկնքում, կարճ ժամանակով մեզ մոտ են լինում, և հետո, վերադառնալով իրենց կողմերը, գիրք են գրում իրենց ճանապարհորդության մասին, նրանք Ամերիկային հինգ տողից ավելի չեն նվիրում։ Յեվ ինչ են ասում նրանք մեր մասին։ Նրանք ասում են, վոր մեր անապատը բնակված է այս ու այն տեղ ցիր ու ցան յեղած մի քանի հարյուր հազար բիլիոն կարմիր հրեշտակներով, իսկ նրանց մեջ յերբեմն պատահում են ինչ-վոր տարորինակ հիվանդ հրեշտակներ։ Նրանք, հասկանում եք, հաշվում են, վոր մենք՝ սպիտակներս, և պատահական խափշիկները—նույնպես հնդիկներ ենք, վորոնք սպիտակել կամ սևացել են վորևե կաշվի հիվանդությունից, ինչպես բորոտությունն է—ի պատիժ, հասկանում եք, ինչ-վոր մի զարշելի մեղքի։ Այդ շատ դառն դեղահատ է մեզ բոլորիս համար, բացի դրանից, նույնիսկ մեզնից ամենահամեստի

համար, վորոնք հույս ունեն, թե պիտի այստեղ ընդունվեն վորպես մի մոլորյալ վոչխար, և, իբրև վրադիր, կարող են գրկել Աբրահամին։ Ցեսս չեմ հարցրել ձեզ, նավապետ, մանրամասնությունների մասին, բայց ես կարծում եմ, այդ պարզ է առանց հարց ու փորձի (յեթե իմ փորձը վորևե արժեք ունի), վոր վոչ մի առանձին հանդես չեղավ, յերբ դուք այստեղ յեկաք,— ինչ կասեք դրան։

— Մի հիշեցնեք այդ մասին, Սենդի,—ասացի ես՝ մի քիչ կարմրելով։—Զեյի ուզի, վոր իմ ընտանիքը տեսներ այդ բանը, թե չե նա իմ մասին դուրեկան յեզրակացություն չեր անի։ Փոխեցեք խոսակցության նյութը, Սենդի, փոխեցեք։

— Դե լավ։ Դուք միտքունե՞ք բնակվելու յերկնային Կալիֆորնիայում։

— Զգիտեմ։ Ցեսս վոչինչ չեմ ուզում վորոշել մինչև այն ժամանակ, յերբ իմ ընտանիքն այստեղ կգա։ Իսկ ես մինչ այդ կնայեմ իմ շուրջը, առանց շտապելու, և մի վորոշում կանեմ։ Բացի այդ, ես ճանաչում եյի շատ ուրիշ մեռած մարդկանց, և ես միտք ունեմ նրանց գտնելու, զրուցելու նրանց հետ բարեկամներիս մասին, անցածգնացած ժամանակների, այս ու այն բաների մասին, և հարց ու փորձ անեմ, թե արդյոք նրանք հավանո՞ւմ են այստեղ։ Նրանք արդեն ընտելացել են։ Իմ կինն, ասենք, կուզենա հավանորեն ապրել Կալիֆորնիայում, վորովհետև նրա մեռելների մեծ մասն այստեղ կլինեն, իսկ նա սիրում է ապրել ծանոթների մեջ։

— Զթողնե՞ք։ Դուք տեսնում եք, թե ինչպես



է Ջերսիի շրջանը յերկնքում։ Իսկ դե Կալիֆորնիան հազար անգամ վատ է։ Այնտեղ վիճում են կեղտոտ դույնի բութ հրեշտակներ, և ամենամոտիկ սպիտակ հարևանը ձեզանից միլիոնավոր մղոն հեռու կլինի։ Այն, վոր առանձնապես պակասում է մարդուն յերկնքում—այդ հասարակությունն է,— հասարակություն, վորն ունի նրա տեսքը, դույնը և լեզուն։ Ցեսս այդ պատճառով մեկ-յերկու անգամ փորձել եմ բնակվել յերկնքի յեվրոպական մասում։

— Իսկ ինչո՞ւ դուք չմնացիք այնտեղ։

— Ո՜, զանազան պատճառներով։ Առաջինը՝ վոր չնայած դուք այստեղ շատ սպիտակամորթներ եք տեսնում, բայց դուք գրեթե նրանցից վոչ մեկին չեք հասկանում և այդ պատճառով այնպես եք կարոտում զրուցելու, ինչպես այստեղ։ Ցեսս սիրում եմ նայել ռուսի, գերմանացու կամ իտալացու վրա։ Ցեսս սիրում եմ նայել նույնիսկ ֆրանսիացու վրա, յեթե միայն հաջողվի տեսնել նրան վորևե վոչ այնքան անհամեստ բանի վրա, բայց նայել—այդ չի նշանակում, թե զրանով կարող է զրույցի քաղցը հագենալ, իսկ դուք ուզում եք զրույց անել։

— Իսկ այնտե՞ղ, վորտեղ Անգլիան է, Սենդի, վորտեղ անգլիական շրջանն է յերկնքում։

— Այո՛, բայց այդ շրջանում էլ քիչ չափով է լավ մյուսից։ Քանի դեռ դուք հանդիպում եք այնպիսի անգլիացիների, վորոնք ծնվել են վոչ շուտ քան յերեք հարյուր տարի առաջ, այդ դեռ վնաս չունի։ Բայց Յեղիսաբեթի[1]) ժամանակները լեզուն արդեն սկսում է խառնվել և քանի

[1]) Յեղիսաբեթ (1533—1603)—անգլիական թագուհի։

անցնում է դարերի խորքը, այնքան նա դառնում է անհասկանալի։ Ցես մի փոքր խոսեցի մի ինչ-վոր Լենգլենդի[1]) և Չոսեր[2]) անունով մի ուրիշ մարդու հետ—հին ժամանակների յերկու բանաստեղծ—և բան դուրս չեկավ դրանից։ Ցես բոլորովին չեյի հասկանում նրանց, իսկ նրանք չեյին հասկանում ինձ։ Ցես հետո նամակներ եյի ստանում նրանցից, բայց նրանք գրում եյին այնպիսի կոտրված անգլերեն լեզվով, վոր յես վոչինչ չկարողացա հասկանալ։ Իսկ դրանց համեմատությամբ ավելի հին ժամանակներում ապրող անգլիացիներն արդեն թվում են ռուսարազգիներ—վոչ ավելի, վոչ պակաս։ Նրանք խոսում են դանիերեն, գերմաներեն, նորմալ—ֆրանսերեն բարբառով, իսկ յերբեմն ել՝ այս յերեք լեզուների ինչ-վոր խառնուրդով։ Ավելի հները խոսում են լատիներեն, հին բրիտանական լեզվով, իռլանդական և հելլական լեզուներով։ Իսկ ավելի հին ժամանակներում գալիս են բիլիոն և բիլիոն իսկական վայրենիներ, և նրանք խոսում են այնպիսի վայրիվերո լեզուներով, վոր ինքը սատանան չի հասկանա։ Վորպեսզի անգլիական յերկնային շրջաններում պատահեք մի այնպիսի մարդու, վորին դուք հասկանում եք, դուք պիտի անցնեք հսկա ամբոխների միջով, վորտեղ խոսում են այնպես, վոր դուք վոչին չեք

[1]) Լենգլենդ—անգլիական պոետ, վոր ապրում եր տասնչորսերորդ դարում։

[2]) Չոսեր Չոֆրի—անգլիական պոետ, վորին անվանում են «անգլիական պոեզիայի հայրը»։ Նույնպես ապրում եր 14-րդ դարում։



քմբոնի։ Ամեն մի յերկիր աշխարհում բիլիոնավոր տարիների ընթացքում հաճախ ծածկվում եր տարբեր լեզուներ ունեցող տարբեր ժողովուրդներով, և այդ պատճառով յերկնքում գոյացավ բարբառների մի անասելի խառնուրդ։

— Սենդի,—ասացի յես,—իսկ դուք շատերին քիչ տեսել այն մեծ մարդկանցից, վորոնց մասին պատմության մեջ խոսվում է։

— Այո, շատերին։ Ցես տեսել եմ թագավորներ և շատ տեսակ՝ աչքի ընկնող մարդկանց։

— Ցեվ թագավորներն այստեղ թագավոր են մնում, ինչպես ներքևումն եյին։

— Վոչ, մարմինն այստեղ չի բերում իր հետ իր յերկրային աստիճանը։ Թագավորների աստվածային իրավունքը—բավական լավ առաստել է յերկրի համար, բայց այդ այստեղ չի անցնում։ Թագավորներն այստեղ դերասաններ են դառնում, կրոնական գրքերի առատրով են զբաղվում և զանազան այդպիսի բաներով։

— Իսկ տեսե՞լ եք յերբևիցե Նապոլեոնին[1]), Սենդի։

— Հաճախ։ Ցերբեմն յերկնային Կորսիկայում, յերբեմն Ֆրանսիայում։ Նա միշտ դուրս է գալիս մի աչքի ընկնող տեղ և ման է գալիս հոնքերը կիտած, ձեռքերը կրծքի վրա խաչած, դաշտային յերկդիտակը թևի տակ, գոռոզ տեսքով, մռայլ և խորհրդավոր, ինչպես և պահանջում է նրա փառքը, և սաստիկ տարակուսանքի մեջ, վորովհետև վոչ

[1]) Նապոլեոն (1769—1831)—հռչակավոր զորավար, Ֆրանսիայի կայսր։

վոր նրան այստեղ բարձր չի դասում վորպես զինվորի։

— Իսկ ո՞վ է ավելի բարձր։

— Ո՛, շատ մարդիկ, վորոնց մասին մենք վոչինչ չենք լսել առաջ, ինչպես այն մյուսները, վոր դուք գիտեք — կոշկակարը, անասնաբուժը և սրողը,— ինչ-վոր անկյալներ, վորոնք յերբեք իրենց կյանքում ձեռքներին սուր չեն բռնել և վոչ մի անգամ հրացան չեն կրակել, բայց ռազմական արիություն եր թագնված նրանց մեջ և միայն հարմար դեպք չեր յեղել այն յերևան բերելու համար։ Այստեղ նրանք բռնում են իրենց իսկական տեղը, և Կեսարը, Նապոլեոնը Աղեքսանդրը նրանցից ցածր են կանգնած։ Ամենամեծ ռազմական հանճարը բոլոր ժամանակների համար Բոստոնի արվարձանում ապրող քարտաշն եր— Աբսելոմ Զոնս անունով։ Նա մեռավ հեղափոխության ժամանակ։ Յերբ և վորտեղով ել նա անցնի—մարդիկ խմբերով վազում են նրան տեսնելու։

Ամեն մեկն այժմ, հասկանում եք, գիտե, վոր յեթե առիթ լինի, Զոնսն աշխարհին ցույց կտա այնպիսի մի ռազմական արվեստ, վորի հանդեպ առաջ կատարված բոլոր քաջերի գործերը մանկական խաղ և աշակերտական փորձ կլինեն։ Բայց այդպիսի առիթ չունցավ նա։ Նա փորձում եր մի քանի անգամ կամավոր գրվել, բայց նրա ձեռքերը զուրկ եյին յերկու բութ մատից և պակասում եր նրա առջևի յերկու ատամը, դրա համար ել զինվորագրության սպան նրան բանակ չեր ընդունում։ Սակայն, ասում եմ յես, ամեն



մեկը գիտե հիմա, թե ինչ կարող եր նա լինել, և միլիոնավոր մարդիկ ձգտում են գոնե հարևանցի տեսնել նրան, վորտեղ ել վոր նա յերևալու լինի։ Յեվ Կեսարը, և՛ Աղեքսանդրը, և՛ Նապոլեոնը— դրանք բոլորը նրա շտաբումն են, այնտեղ են նաև դեռ շատ ուրիշ ավելի հռչակավոր զորավարներ։ Բայց հանդիսատեսները հազիվ նկատում են նրանց, յերբ նա հայտնվում է։ Բոմ։ Լսում եք։ Ելի մի վորոտալից վողջույն։ Պանդոկատերը կարանտինից դուրս է գալիս։

Սենդին և յես կախ տվինք մեզ վրա մեր սարքը։ Հետո մենք ցանկություն հայտնեցինք և մի վայրկյան հետո հանդիպման տեղում եյինք։ Մենք կանգնած եյինք ովկիանոսի ափին՝ յերկնային տարածության մեջ, և նայում եյինք մշուշոտ հեռուն, բայց վոչինչ չեյինք տեսնում։ Մեզնից վոչ հեռու գլխավոր ամբիոնն եր—շարքշարքի յետևից բարձրանում եյին աղոտ ջահերը՝ հասնելով անչափ բարձրության։ Այդ ամբիոնի յերկու կողմից տեղավորված եյին նստարանների շարքեր հասարակ ժողովրդի համար։ Նրանք ձգվում եյին հեռուն բազմաթիվ մղոններ, այնպես վոր նրանց վերջը չեր յերևում։ Այդ տեղերը դատարկ եյին, խաղաղ և մռայլ, ինչպես չլուսավորված թատրոնն առանց հանդիսատեսների։ Սենդին ասաց.

— Նստենք այստեղ և սպասենք։ Ա՛յ, այնտեղ՝ հեռվում մենք շուտով կտեսնենք շքերթի սկիզբը։

Յես վրա բերի.

— Բավական ամայի յե այստեղ, Սենդի։ Չի՞ խանգարել այստեղ վորևե բան։ Մեզնից բաճի

վոչ վոք չկա, այնքան էլ նախանձելի չե պանդոկատերոջ համար։

— Մի անհանգստանաք, ամեն ինչ կանոնավոր ե։ Մի համազարկ էլ կլինի, և այն ժամանակ կտեսնեք։

Մի քիչ հետո մենք նկատեցինք ինչ-վոր փայլի նման մի բան՝ հեռվում, հորիզոնի վրա։

— Զահավոր յերթիսկիզբն ե,—ասաց Սենդին։

Փայլն ընդարձակվեց, դարձավ ավելի լուսավոր ու պայծառ։ Շուտով նա փայլատակեց ինչպես շոգեկառքի ճրագները։ Յեվ քանի գնաց — ավելի բոցավառվեց, մինչև վոր դարձավ մի արևի նման, վորը նայում ե հորիզոնի գծից վերև ծովի վրայով—ճառագայթների մի վիթխարի խուրձ, վորոնք ուղղված եյին բարձր՝ դեպի յերկինք։

— Նայեցեք գլխավոր ամբիոնին և նստարաններին, դե շուտ,—ասաց Սենդին,—և լսեցեք համազարկը։

Յեվ այդտեղ մի անգամից՝ «բոմ—բոմ—բոմ» —վորպես միլիոնավոր ամպրոպային հարվածներ մի համազարկով, և ամբողջ յերկինքը ցնցվեց։

Ապա հանկարծակի և շլացնող լույսը վողողեց ամեն ինչ մեր շուրջը, և նույն ակնթարթում միլիոնավոր նստարաններն՝ առաջինից մինչև վերջինն՝ արդեն բռնված եյին, և վորքան զորում եր մարդկային աչքը, յերկու ուղղությամբ կուտակվում եյին իրար վրա մարդկային զանգվածները, վորոնք հիանալի կերպով վողողված եյին լուսով։ Շունչդ կտրվում եր այդ տեսարանից։

Սենդին ասաց.

— Ահա թե ինչ ձևով ենք մենք այստեղ տեղերը բռնում։ Ժամանակի վոչ մի կորուստ։ Վոչ մի ուշացող—վարագույրը բարձրանալուց հետո։ Ցանկությունն ավելի արագընթաց ե, քան հաղորդակցության վորևե միջոց։ Քառորդ վայրկյան դրանից առաջ այդ մարդիկ միլիոնավոր մղոն այստեղից հեռու եյին։ Յերբ նրանք լսեցին ազդանշանը, նրանց մեջ եր միայն ցանկանալ, և ահա այստեղ են։

Սքանչելի խումբը յերգեց.

Փափագում ենք ձայնդ լսելու
Յեվ քեզ մոտիկից տեսնելու։

Այդ մի գեղեցիկ յերաժշտություն եր, բայց անշնորհքներն սկսեցին ձայնակցել և փչացրին յերգեցողությունը, ճիշտ այնպես, ինչպես այդ լինում ե յերկրի վրա։

Յերթը մոտենում եր։ Զարմանալի տեսարան։ Խիտ շարքերով և պատկառելի, կողք-կողքի, սլանում եյին հինգ հարյուր հազար հրեշտակներ՝ ամեն մեկի ձեռքին մի ջահ, բարձր յերգելով։ Թեվերի վորոտալից թնդյունը գլխացավ եր առաջացնում։ Հեռուներից թևավոր զանգվածները վրա եյին տալիս յուրաքանչյուր կողմից — սլանում եյին առաջ, բարձրանալով դեպի յերկինք, և առաջ կայծում եյին հեռվում ոճանման ժապավենի պես, մինչև դառնում եյին մի աղոտ շերտիկ բոլորովին հեռվում։ Յեվ նոր թափով թռչում եյին ու թռչում հրեշտակները և, վերջապես, հասկանալի յե, յերևաց պանդոկապետը։ Յեվ բոլորը վոտքի կանգնեցին, և յերկինքը, ասեմ ձեզ դղրդաց վողջույնների ձայնից։ Պանդոկատերն ամբողջովին ժպիտ դարձավ

Նրա լուսապսակը հպարտորեն թեքվել եր մի

ականջի վրա, և յերբեք յես չեյի տեսել այդպիսի ինքնագոհ արդար մարդու։ Յերբ նա բարձրանում եր աստիճաններով գլխավոր ամբիոնի վրա, խումբը յերգում եր.

Ամբողջ յերկինքը քեզ է սպասում
Յեվ քաղցը ձայդ լսել է ուզում։

Գլխավոր ամբիոնի՝ ճաղերով շրջապատված լայն հարթակի վրա կագնած եյին իրար կողքի չորս հիասքանչ վրաններ, և փայլուն պատվո պահակները շրջապատում եյին դրանց։ Վրանները միշտ փակ եյին։ Յերբ պանդոկատերը մագլցում եր աստիճաններով վերև, գլուխ տալով և ժպտալով բոլորին և ամեն մեկին, և յերբ նա վերջապես հասավ հարթակին, այդ վրանները հանկարծակի թռան վերև, և մենք տեսանք վոսկուց շինած չորս գահ, վորոնք ամբողջովին ծածկված եյին թանկագին քարերով։ Յեվ յերկու միջին գահերի վրա նստել եյին յերկու ճերմակ միրուքավոր ծերունի, իսկ մյուս յերկսի վրա—յերկու շքեղ զարդարված հսկա ափսեանման լուսապսակը գլխներին և փայլուն զրահներով։ Բոլոր միլիոնավոր հանդիսատեսներն ընկան ծնկների վրա և ագահորեն նայում եյին, և բոլորը թվում եյին գոհ, և ցնծալից վորոտն անցավ շարքերի միջով։ Ասում եյին.

—Յերկու հրեշտակները։ Ի՞նչ սքանչելի յե։ Իսկ ո՞վ են մյուսները։

Հրեշտակները պանդոկապետին մի թեթև ու սառը ռազմական վողջույն տվին։ Յերկու ալեորները վեր կացան։ Նրանցից մեկն ասաց.

—Մովսեսն ու Յեսավը վողջունում են քեզ։



Յեվ ապա չորսով էլ անհետացան, ու գահերը մընացին դատարկ։

Պանդոկատերը մի փոքր հիսաթափված եր յերևում։ Նա, կարծում եմ, հույս ուներ գրկելու այդ ծերունիներին։ Բայց ամբողջ հավաքույթը լի յեր գոհունակությամբ և հպարտությամբ։ Նրանք տեսան Մովսեսին և Յեսավին։ Ամենուրեք լսվում եր.

—Դուք տեսաք նրանց։ Յես տեսա։ Յեսավի կողքը դեպի ինձ եր, բայց Մովսեսին յես տեսա ամբողջ դեմքովը մեկ, և այնքան պարզ, ինչպես տեսնում եմ ձեզ հիմա։

Շքերթը վերցրեց պանդոկատիրոջը և անցավ նրա հետ առաջ, իսկ ամբոխը բաժանվեց ու ցրիվ յեկավ։ Յերբ մենք վերադառնում եյինք տուն, Սենդին ասաց, վոր հանդիպումն անցավ խոշոր հաջողությամբ, և պանդոկատերը կարող է դրանով այսուհետև ընդմիշտ հպարտանալ։ Նա ավելացրեց, վոր մենք էլ հաջողություն ունեցանք։

—Կարելի յե,—ասաց նա,—այցելել հանդիպումները քառասուն հազար տարի շարունակ և չտեսնել յերկու այնպիսի մեծավորների, ինչպես Մովսեսն ու Յեսավն են։ Մենք իմացանք հետո, վոր մենք քիչ եր մնացել տեսնեյինք նաև մի ուրիշ պատրիարքի, և բացի այդ՝ մի հանճարեղ մարդարեյի։ Բայց վերջին րոպեյին նրանք ուղարկել եյին իրեց ափսոսանքը, վոր չեն կարող գալ։ Սենդին ասաց, վոր այնտեղ, վորտեղ Մովսեսն ու Յեսավն եյին կանգնած, արձան պիտի կանգնեցվի, վորի վրա պիտի նշեն տարեթիվը և այդ

անցքի բոլոր հանգամանքները, և ճանապարհորդները հազարավոր տարիներ կայցելեն այստեղ — արձանը տեսնելու, բերանները բաց արած նրա վրա մագլցելու և իրենց անուններով կեղտոտելու։

ՀՀ Ազգային գրադարան
NL0398002

412

1123

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ

МАРК ТВЭН

# Путешествие капитана Стормфилда на небо

Гиз ССР Армении, Эривань, 1936